Ձև N 2

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

(ՀՀ պետական կառավարման համակարգի մարմնի անվանումը)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/2024թ. տարեկան/

Ծրագրի հերթական համարը	Նպատակը	Միջոցառումների անվանումը	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթագրություն
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1	Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայում և համայնքային ծառայության համակարգի զարգացում	1.2 Համայնքային ծառայության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացում **/2021-2025 թվականներ (շարունակական)/**	«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը քննարկվում է ՀՀ ՏԿԵՆ-ում: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների և Երևանի քաղաքապետարանի		

			աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատելու մասին» N 11-Ն հրամանով հաստատվել է համայնքների աշխատակազմերի կարգապահական ներքին օրինակելի նոր կանոնակարգը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 64-Լ հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայողների 2025 թվականի վերապատրաստման ծրագիրը:		
2	Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հետագա տնտեսական ակտիվության և աճի ապահովում	2.1. Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացում **/2021-2026թթ./**	ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների առօրյա հոգսերը հնարավորինս մեղմելու և կենսապայմանները բարելավելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշումը, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալները, փոխհատուցման կարգն ու փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների ցանկը: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացված 1,048,375⊠7 հազ. դրամ գումարը ՀՀ կառավարության 29.02.2024թ. N 289-Ն և 19.12.2024թ. N 2017-Ն որոշումներով բաշխվել է		

			համապատասխան ՀՀ մարզպետների աշխատակազմերի և Ջրային կոմիտեի միջև՝ սահմանամերձ 13 համայնքների 82 բնակավայրերին գազի, էլեկտրաէներգիայի և ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման և անշարժ գույքի հարկի ամբողջական փոխհատուցման համար։ Փաստացի ծախսն ըստ կատարողների կազմել է ՀՀ Արարատի մարզ՝ 19,712.7 հազ. դրամ, ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ 124,398.9 հազ. դրամ, ՀՀ Սյունիքի մարզ՝ 211,222.9 հազ. դրամ, ՀՀ Վայոց ձորի մարզ՝ 62,155.2 հազ. դրամ, ՀՀ Տավուշի մարզ՝ 574,846.1 հազ. դրամ, Ջրային կոմիտե՝ 55,407.3 հազ. դրամ, ընդամենը՝ 1,047,743.1 հազ. դրամ։ Չօգտագործված գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե։		
		2.2 «Հայաստանի Հանրապետության 2022-2027թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին՝ ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը **/2022-թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ/**	Հայաստանի Հանրապետության 2025 – 2030 թվականների տարածքային զարգացման ռազմավարության նախագիծր 20 .12.2024թ. թիվ ԴԽ/15/41645-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ։		

4	Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ենթակառուցվածքների զարգացում	4.1 ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակության ապահովում **/2021-2026թթ./**	ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման գործընթացի շրջանակներում 2024 թվականի ընթացքում հավաքագրվել, ուսումնասիրվել, քննարկվել և սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել է ՀՀ համայնքներից ներկայացված 2024 թվականի թվով 242 սուբվենցիոն ծրագիր՝ 81,14 մլրդ. դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ 45,14 մլրդ դրամ, ՀՀ համայնքների համաֆինանսավորումը՝ 34,29 մլրդ դրամ և այլ ներդրողների համաֆինանսավորումը՝ 1,19 մլրդ դրամ։ Դրա հետ մեկտեղ, ՀՀ համայնքներից հավաքագրվել, ուսումնասիրվել և քննարկվել են 2025 թվականի թվով 319 սուբվենցիայի նախնական հայտ՝ 106,1 մլրդ դրամ ընդհանուր արժեքով։ Միաժամանակ, ՀՀ համայնքներից հավաքագրվել և		

			ուսումնասիրվել է 2025 թվականի շուրջ 135 սուբվենցիայի ամբողջական փաթեթ՝ 61,65 մլրդ դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում՝ 31,27 մլրդ դրամ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ։ 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասով կատարվել են մշտադիտարկման աշխատանքներ, ուսումնասիրվել են իրականացված աշխատանքների համար վճարման փաթեթները և մշակվել են ՀՀ կառավարության թվով 14 համապատասխան որոշումներ՝ սուբվենցիոն ծրագրերը ՀՀ պետական բյուջեից համաֆինանավորելու նպատակով։ Կարող ենք փաստել, որ 2024 թվականի ընթացքում ՀՀ համայնքներում իրականացվել է շուրջ 58,7 մլրդ դրամ ընդհանուր արժեքով սուբվենցիոն ծրագրեր, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հատկացվել է 31,831 մլրդ դրամ, ՀՀ համայնքների համաֆինանսավորումը կազմել է 25,27 մլրդ դրամ և 1,6 մլրդ դրամ՝ այլ ներդրողների համաֆինանսավորումը։ Ընդ որում, 2024 թվականի ընթացքում իրականացվել են ինչպես 2024 թվականին հաստատված, այնպես էլ 2021, 2022 և 2023 թվականներին		

			հաստատված և շարունակվող ծրագրերը։ Հարկ է նշել, որ 2022, 2023 և 2024 թվականներին սկսած, սակայն եղանակային պատճառներով չավարտված սուբվենցիոն ծրագրերի պայմանագրերի ժամկետները երկարաձգվել են մինչև 2025 թվականի նոյեմբերի 15-ը։		
5	Միավորված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում և հասանելիության ընդլայնում	5.2 Բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավում **/2022-2026թթ./**	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում կառուցվել են հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրը և Ակունք ու Մարտունի բնակավայրերում աղբի փոխաբեռնման կայանները՝ ենթակառուցվածքների ներառմամբ։ ՀՀ կառավարության 04.01. 2024թ. թիվ 27-Ն որոշմամբ հաստատված ՀՀ տարածքում գոյություն ունեցող և գործող աղբավայրերի շահագործման, բարեկարգման ու փակման նվազագույն նորմերի համաձայն՝ ՀՀ համայնքներում իրականացվել են գործող աղբավայրերի բարեկարգման աշխատանքներ, մասնավորապես մշակվել են աղբավայրի շահագործման		

			պլաներ, բարեկարգվում են աղբավայրերի տարածքներ՝ ցանկապատվել, եզրագծով ծառատներ կազմակերպվել և այլն /Գյումրի, Արմավիր, Գորիս/։ Իսկ փակման ենթակա աղբավայրերի մասով՝ համայնքներում արդեն իսկ փակվել է շուրջ 100 աղբավայր և աղբանոց, հաշվի առնելով, որ համայնքների միավորման գործընթացից հետո աղբի փոխադրումն ու տեղադրումն իրականացվում է հիմնականում կենտրոնացված ձևով։		
		5.3 Գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, տեղափոխման և հեռացման կամ վերամշակման գործընթացների ապահովում **/2022-2026թթ./**	Մշակվել են ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բոլոր բնակավայրերի համար աղբահանության «խելացի» սխեմաները, այդ թվում՝ ելնելով հաշվարկված գոյացող աղբի քանակից՝ յուրաքանչյուր բնակավայրում աղբամանների քանակի ու տեղադիրքերի, աղբատար մեքենաների քանակի ու տեսակի և արդյունավետ երթուղիների ներառմամբ, որոնց կիրառումը նախատեսվում է 2025 թվականի ընթացքում։ Մշակվել և ՏԿԵ նախարարի համապատասխան հրամաններով հաստատվել են խոշոր եզրաչափերի, շինարարական աղբի, ինչպես նաև կենսաքայքայվող աղբի հավաքման, տեղափոխման,		

			պահման ու հեռացման ընթացակարգերը։ Միաժամանակ, համակարգվել է «Հանրապետության 8 մարզերում կոշտ թափոնների ինտեգրված համակարգի ներդրման» ծրագրի շրջանակներում ՎԶԵԲ-ի կողմից ընտրված խորհրդատվական ընկերության կողմից իրականացվող նախնական ուսումնասիրությունը, և ուսումնասիրության արդյունքներով նախարարությունում քննարկվել են աղբահանության գոտիավորման և կառավարման մոդելների, աղբի հավաքման, այդ թվում վերամշակման առաջարկությունները։ Արդյունքում նախատեսվում է նշված առաջարկությունները քննարկել ՀՀ վարչապետի մոտ և հավանության արժանանալու դեպքում՝ կնախաձեռնվի գոտիների տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը /հստակեցնելու աղբավայրերի ու փոխաբեռնման կայանների ճշգիրտ տեղակայումները՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և նախածգերի կազմման աշխատանքները/ և այնուհետև կիրականացվեն ներդրումային ծրագրերը։		
		5.4 ՀՀ կառավարության 01.04.2021թ N464-Լ որոշման մեջ փոփոխություններ	ՀՀ կառավարության 01.04.2021թ N464-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ	«ՀՀ 8 մարզերում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգի ներդրում» ծրագրի շրջանակ-	

		կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ **/2024 թվականի մարտի 2-րդ տասնօրյակ/**	վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ՏԿԵ նախարարության 26.11.2024թ. թիվ ԴԽ/16/38406-2024 գրությամբ: Միջոցառումների նոր ծրագրով նախատեսվում է իրականացնել աղբահանության ռազմավարության դրույթներով ամրագրված հանրապետության բնակավայրերում ինտեգրված և կայուն աղբահանության համակարգի ներդրման միջոցառումներ և ներդրումային ծրագրեր, որոնց հիմնական մասը կապված է ՎԶԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «ՀՀ 8 մարզերում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգի ներդրում» ծրագրի հետ, այդ թվում՝ միջոցառումների իրականացման ժամանակացույցի մասով:	ներում իրականացված նախնական ուսումնասիրությունը ևս մեկ անգամ քննարկվել է Բանկի ներկայացուցիչների և միջազգային փորձագետների հետ /ՏԿԵ նախարարությունում 26.09.2024թ./ (հղումը՝ https://www.mtad.am/news/1764) և նպատակ ունենալով ծրագրի իրագործման դեպքում հստակեցնել ծրագրային ուղղությունները և իրականացման ժամկետները, որոնք նախատեսվում են ռազմավարության միջոցառումների նոր ծրագրի նախագծում:	

7	Միավորված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում և հասանելիության ընդլայնում	7.3 «Պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների ցանկը հաստատելու, գործառույթների իրականացումն օպերատորին պատվիրակելու, գործառույթների ցանկը հաստատելու, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևր և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ ենթադրող որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ **/2022-2024թթ./**	***Կատարված է:*** Մշակվել և ՏԿԵ նախարարի 08.11.2024թ.-ի N ԳՍ/14.2/36533-2024 գրությամբ Վարչապետի աշխակազմ է ներկայացվել ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը: Այն քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 19.11.2024թ.-ին կայացած նիստում: Կոմիտեի նշյալ նիստի N ԿԱ/353-2024 արձանագրության 1-ին կետով ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկվել է ՀՀ ՏԿԵ նախարարության հետ համատեղ քննարկել որոշման ամբողջական վերանայման հարցը և անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավական ակտի նախագիծը ներկայացնել ՏԶևՇՄ կոմիտեի քննարկմանը, ինչպես նաև ներկայացնել դիրքորոշում և տեղեկություններ նիստի ընթացքում հնչեցված մի շարք հարցադրումների, առաջարկությունների և դիտարկումների վերաբերյալ: Տեղեկացնում ենք, որ ՏԿԵՆ-ն իր մասով համապատասխան կարծիքը և անհրաժեշտ տեղեկությունները փոխանցել է ՀՀ ԱՆ: Մասնավորապես, ԱՆ-ին ուղարկված վերոնշյալ գրությամբ ՏԿԵՆ-ը հայտնում է, որ սկզբունքային որևէ առարկություն		

			չունի մայր որոշման հիմքում դրված հիմնական բովանդակության վերաբերյալ, և խնդրո առարկա նախագծի մշակման միակ նպատակը գործող որոշմամբ սահմանված և օպերատորների կողմից մատուցվող պետական ծառայությունները ավելի մեծ թվով համայնքների բնակչությանն առավել հասանելի դարձնելն է: ՏԿԵՆ-ը գտնում է, որ նպատակահարմար կլինի ներկա փուլում ընդունել ներկայացված նախագիծը, ընդլայնել օպերատոր-համայնքների ցանկը, այդպիսով նաև՝ մատուցվող ծառայությունների աշխարհագրությունը, իսկ դրան զուգահեռ և ԱՆ-ի համակարգման ներքո, կարող է իրականացվել մայր որոշման բովանդակային վերանայման գործընթացը:		
8	Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում, լիազորությունների ապակենտրոնացում	8.4 «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր խմբագրությամբ նախագծի ներկայացումը Վարչապետի Աշխատակազմ **/2024 թվականի դեկտեմբեր ի 2-րդ տասնօրյակ/**	Օրենքի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 20. 12.2024թ. № ԴԽ/14.1/41649-2024 գրությամբ՝ նախագծային փաթեթը լրացուցիչ շրջանառելու հեռանկարով:		
9	Միջհամայնքային համագործակցության տարբեր ձևերի ներդրում	9.2 Օրենքով միավորում ստեղծելու վերաբերյալ օրենսդրական փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում: **/2022-2026թթ./**	2024 թվականի ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մշակած «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող նախագծում ներառվել է «ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ		Միջոցառման կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 26

			ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ» գլուխը, որտեղ նկարագրված են միջհամայնքային միավորումները, դրանց ստեղծումը և լուծարումը, ինչպես նաև միջհամայնքային համագործակցության ձևերը:		.12.2024թ. №ԴԽ/14.1/42604-2024 գրությամբ:
10	Հանքարդյունաբերության ոլորտում միասնական և համապարփակ քաղաքականության վարում	10.2Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ ոլորտը կարգավորող օրենքների, ինչպես նաև դրանցից բխող այլ իրավական ակտերի մշակում /**2024-2026թթ.**/	1. Ընդունվել է Կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի «ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1246-Լ որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196180): 2.Մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (ընդերքօգտագործողների կողմից սոցիալական մեղմացման նպատակով համայնքներին կատարվող հատկացումների միանման և արդարացի բաշխման մեխանիզմի սահմանում):		

			3. Ելնելով հանքավայրի շահագործման եղանակից՝ հանքի շահագործման ընթացքում խախտված հողատարածքների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների երկարաժամկետ տեղադրման տարածքների աստիճանական (փուլային) ռեկուլտիվացիայի պահանջի՝ ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևում ամրագրման նպատակով մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը։ 4. Մշակվել է «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությամբ նախատեսված փոփոխությունների իրականացման ժամանակացույցի և չափորոշիչների սահմանման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» Վարչապետի որոշման նախագիծը և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ (Վարչապետի աշխատակազմից առաջարկվել է դիտարկել փոխվարչապետի որոշմամբ կամ		

			ՏԿԵ նախարարի հրամանով հաստատելու տարբերակը)։ 5. Հանքի փակման ծրագրի կազմմանը ներկայացվող պահանջների թարմացման նպատակով 27.01.2025թ. ընդունվել է ՏԿԵ նախարարի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 249-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» 05-Ն հրամանը։ 6. Հողօգտագործման իրավունքի տրամադրման և հողերի ձեռքբերման գործընթացների և գործիքակազմի պարզեցման, ինչպես նաև հողօգտագործման և ընդերքօգտագործման գործընթացների ներդաշնակեցման նպատակով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակվել է միասնական փաթեթ, որում ներառված են «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Քաղաքաշինության մասին		

			օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, ինչը բխում է Ռազմավարության գործողությունների պլանով սահմանված 3.3-րդ թիրախային ուղղության, խնդիր 1-ի 1-4-րդ կետերի պահանջից (Արդարադատության նախարարության՝ պետական-իրավական փորձագիտական եզրակացության հիման վրա Օրենքների նախագծերի փաթեթը լրամշակելուց հետո, կներկայացվի Վարչապետի աշխատակազմ)։		
11.	ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմում և հրապարակում (շարունակական)	11.1 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի նախագծի կազմում, ներկայացում ՀՀ կառավարություն և հրապարակում **/2023-2026թթ./**	2024թ. նոյեմբերի 20-ին տեղի ունեցավ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ/ EITI) տարեկան համաժողովը, որը նվիրված էր Հայաստանի ԱՃԹՆ-ի 2022 թվականը ներկայացնող ազգային զեկույցին։ Հայաստանի ԱՃԹՆ-ի 5-րդ տարեկան զեկույցի հրապարակման հղումն է՝ https://www.eiti.am/hy/annual-reports/2024։		

12	Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի հետ կապված գործընթացին առնչվող իրավահարաբերությունների կարգավորում	12.3 «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում **/2024թ. դեկտեմբերի 3- րդ տասնօրյակ/**	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N 06-Ն հրամանով սահմանվել են օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հետևյալ հրահանգները (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199954). 1) ոսկու հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 1 հավելվածի. 2) շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 2 հավելվածի. 3) ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 3 հավելվածի. 4) պղնձի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 4 հավելվածի. 5) երկաթի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 5 հավելվածի. 6) կարբոնատային ապարներով ներկայացված հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 6 հավելվածի.		

			7) կավային ապարներով ներկայացված հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 7 հավելվածի. 8) խմելու, տեխնիկական և հանքային ստորերկրյա ջրերի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 8 հավելվածի։ 9) գիպսի և անհիդրիդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը՝ համաձայն N 9 հավելվածի։ (Հաստատվել է ՏԿԵ նախարարի 16.01.2025 թվականի թիվ 02-Ն հրամանով, ներկայացվել է Արդարադատության նախարարություն՝ պաշտոնական հրապարակման)։ Ներկայումս մշակման փուլում է գտնվում լիթիումի և ցեզիումի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգը։		
18	Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողատարածքների տրամադրման իրավական կարգավորում	18.1 «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում և ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման ընդունում **/2024թ. դեկտեմբերի 2- րդ տասնօրյակ/**	Արդարադատության նախարարության՝ պետական-իրավական փորձագիտական եզրակացության հիման վրա Օրենքների նախագծերի փաթեթը լրամշակելուց հետո, կներկայացվի Վարչապետի աշխատակազմ։		

19	Ռեգիոնալ երկրաբանական բնույթի ուսումնասիրությունների նպատակով համաձայնության տրամադրման պայմանների և պահանջների իրավական կարգավորում	19.1 Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնության հայցման և տրամադրման գործընթացի կարգավորումների նպատակով իրավական ակտերի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ **/2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ/**	04.04.2024 թվականի Կառավարության «Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 477-Ն որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191495 (ՎԱ-ի հանձնարարականի համաձայն որոշումն ընդունվեց «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի ընդունումից հետո)		
20	Ընդերքի մասին տեղեկության թվային կադաստրի ստեղծում	20.1 Օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների)՝ պետական կադաստրի (ՕՀՊԿ) և օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի (ՕՀՊՊՀ) վարման ավտոմատ կառավարման տեղեկատվական համակարգերի (այսուհետ նաև՝ ԱԿՏՀ) ստեղծման, վարման և պահպանման ներդրման նպատակով ճանապարհային քարտեզի մշակում: **/2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**	Ճանապարհային քարտեզը հաստատվել է ՏԿԵ նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 3106-Ա հրամանով https://api.mtad.am//storage/images/legal-acts/6765632ccae0e-Havelvac_merged.pdf:		
25	Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկա կա ն և գազի	25.1 ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաները կարգավորող հիմնական տասը փաստաթղթերի մշակում և	2024թ. ընդունվել է «ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկական շուկայում տեղեկատվության փոխանակման կանոններ» փաստաթուղթը:		

	ընդհանուր շուկաների ձևավորում	ընդունում. աշխատանքների իրականացում **/2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**	2024թ. ընթացքում ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման շրջանակներում կայացել են ԵԱՏՄ անդամ պետությունների էներգետիկայի բնագավառի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի, ԵԱՏ Հանձնաժողովի կոլեգիային կից էլեկտրաէներգետիկայի խորհրդատվական կոմիտեի, խորհրդատվական կոմիտեի էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ենթակոմիտեի մի շարք նիստեր և խորհրդակցություններ։ 2024թ.-ի ընթացքում շարունակվել են Միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման մասին միջազգային պայմանագրի, Գազի փոխադրման ծառայությունների հասանելիության միասնական կանոնների, Գազի բորսային առևտրի իրականացման կարգի նախագծերի շրջանակներում աշխատանքները։ Հիշյալ փաստաթղթերը քննարկվել են տարբեր մակարդակներում՝ հաշվի առնելով նաև անդամ պետությունների ղեկավարների հանձնարարականը՝ չհամաձայնեցված սկզբունքային կետերը ևս մեկ անգամ ավելի ցածր մակարդակում քննարկելու վերաբերյալ։ 2024թ. ընթացքում ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկայի ձևավորման շրջանակներում կայացել են ԵԱՏՄ անդամ պետությունների էներգետիկայի բնագավառի		
		25.1.2 Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով և 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքների իրականացում **/2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**			

			լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի, ԵԱՏ Հանձնաժողովի կոլեգիային կից նավթի և գազի խորհրդատվական կոմիտեի, գազի շուկայի ձևավորման գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքային խմբի մի շարք նիստեր և խորհրդակցություններ:		
26	Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում	26.1 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի և ավարտական փուլի աշխատանքները **/2022-2025 թվականներ/**	Միջոցառման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և իրականացվում են հետևյալ աշխատանքները. Իրականացվել են՝ Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի տեխնոլոգիական գործընթացների և կատարող մեխանիզմի ավտոմատ կարգավորման սարքավորումների արդիականացման, Գլխավոր և հատուկ մասնաշենքերի 2ՊԷՍ-1, 2ՊԷՍ-2 սառնամատակարարման օդի օդափոխության համակարգերի տեղակայում՝ նախագծով նախատեսված անհրաժեշտ բաղկացուցիչ մասերի մատակարարման, Թրծաթողումից հետո շահագործման ընթացքում Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորի իրանի մետաղի հատկությունների վերահսկման ծրագրի մշակման և ապահովման աշխատանքները: Իրականացման փուլում են Հայկական ԱԷԿ-ի առանձին հատկացրած տարածքում ապամոնտաժային, կառուցա-մոնտաժային, գործարկման, կարգաբերման աշխատանքները՝ նոր ԲԲՍ-110/220 կՎ-ի կառուցման համար, Հայկական ԱԷԿ-ի		
		26.1.2 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի աշխատանքները **/2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ/**			

			շրջանառու ջրի հովացման համակարգի թիվ 1 և թիվ 3 աշտարակների արդիականացման, Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի տեխնոլոգիական գործընթացների ավտոմատ կարգավորման համակարգի արդիականացման ժամանակ ապատեղակայում և տեղակայում, Գլխավոր մասնաշենքի 1,2Π-1/Α,Б; Π-3Α,Б; 2Π-4Α,Б օդափոխման համակարգերի փոխարինում և Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների մատակարարման աշխատանքները: Հայկական ԱԷԿ-ի վթարային էլեկտրամատակարարման համակարգի դիզել գեներատորային կայանք և ՀԱԷԿ-ում ռադիոակտիվ թափոնների վերամշակման համալիրի նախագծում և կառուցում աշխատանքների իրականացման շրջանակներում իրականացվում են մրցութային գործընթացներ: ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ միջև 02.12.2024թ. կնքվել է 2024թ. հատկացվելիք 5.965 մլրդ ՀՀ դրամի վարկային պայմանագիրը: Բացի այդ կազմակերպվում են մրցութային գործընթացներ՝ 2025թ. և հետագա տարիների աշխատանքների իրականացման համար: Միջոցառման		

			շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մոտ 8,6 մլրդ ՀՀ դրամի վճարումներ: Կատարված վճարումներից մոտ 2,5 մլրդ ՀՀ դրամի վճարումները համարվում են 2021թ. հատկացված բյուջետային վարկի մնացորդներ: Միևնույն ժամանակ, 2024թ.-ի մայիսի 15-ից ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկը կանգնել է ամենամյա պլանային նախազգուշական վերանորոգման՝ (ՊՆՎ-2024) պլանավորված 95 օր տևողությամբ: Փաստացի աշխատանքների տևողությունը կազմել է 88 օր: Ընթացիկ տարում իրականացված աշխատանքների արդյունքում՝ ՀՀ ՄԱԿ կոմիտեն թույլատրել է էներգաբլոկը շահագործել ռեակտորի 100% ջերմային հզորության ռեժիմում:		
27	Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում	27.1 Մշակել ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող ծրագիր-ժամանակացույցը **/2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ/**	Հայաստանում նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նպատակով ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1198-ն որոշմամբ՝ հիմնադրման միջոցով, ստեղծվել է «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» ՓԲԸ-ն՝ Ատոմային էներգիայի միջազգային կազմակերպության ուղեցույցներին համապատասխան, որը կապահովի նոր էներգաբլոկի կառուցման ծրագրի իրականացումը՝ սկսած նախապատրաստումից /ՏՏՀ-ների ուսումնասիրություն, տեխնոլոգիաների ընտրություն/		
		27.1.2 Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման մշակում **/2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**			

			մինչև կառուցում, հետագայում հանդիսանալով նաև շահագործող կազմակերպությունը: Ընկերության ստեղծմանն ուղղված ֆինանսավորումը նախատեսվում է 2025թ. պետական բյուջեից: Նոր բլոկի կառուցման գործընթացի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերել ատոմային էներգետիկայի բնագավառում փորձ ունեցող երկրներ՝ Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ն, Հարավային Կորեան և Չինաստանը: Գործնական առաջարկություններ են ստացվել Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի և Հարավային Կորեայի կողմից:		
28	Էներգետիկ ենթակառուցվածքների վերազինում, արդիականացում, առաջատար տեխնոլոգիաներով հագեցման աշխատանքներ	28.2 Իրականացնել «Չարենցավան-3» 110 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները **/2023-2026 թվականներ/**	Միջոցառման շրջանակներում «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «EFACEC Engenharia e Sistemas, S.A.» (Պորտուգալիա) ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է 2023թ. մարտի 16-ին, սակայն Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարումը և չի ավարտել ենթակայանի վերակառուցման աշխատանքները: Քննարկումների և բանակցությունների		

			արդյունքում 2023թ. նոյեմբերի 30-ին Պատվիրատուի և Կապալառուի միջև սահմանված կարգով ստորագրվել է Հաշտության համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր): 2023թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ, Համաձայնագրի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է լուծված: Քննարկվում է ենթակայանի վերակառուցման իրականացման հետագա հարցը, մասնավորապես՝ ենթակայանի վերակառուցման աշխատանքները նախատեսվում է շարունակել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում էներգետիկ վերափոխման խթանում» արդյունքահեն ծրագրի շրջանակներում: Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվող վարկային համաձայնագիրը գտնվում է վավերացման գործընթացի փուլում:		
		28.3 Իրականացնել «Զովունի» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները **/2023-2024 թվականներ/**	Միջոցառման շրջանակներում շարունակվել են «Զովունի» ենթակայանի վերակառուցման շինարարական, անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների ներկրման աշխատանքները: Ավարտվել են ենթակայանի պահակատան նոր շենքի կառուցման և պահեստի շենքի վերակառուցման շինարարական և 1-ին փուլով նախատեսված՝ էլեկտրատեղակայանքների	Սահմանված ժամկետում աշխատանքների չկատարումը պայմանավորված է Կապալառուի կողմից սարքավորումների ներկրման ու կարգաբերման աշխատանքների իրականացման ժամկետների շեղումներով: Աշխատանքները կավարտվեն 2025թ.:	
		28.3.2 Իրականացնել «Զովունի» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական			

		վերակառուցման աշխատանքները **/2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ/**	տեղակայման շինմոնտաժային և կարգաբերման աշխատանքները: Վերակառուցված էլեկտրատեղակայանքները սահմանված կարգով դրվել են լարման տակ և շահագործվում են: Կապալառուի կողմից մատակարարվել են ենթակայանի վերակառուցման համար նախատեսված գրեթե բոլոր սարքեր-սարքավորումները: Շարունակվում են 2-րդ փուլով նախատեսված էլեկտրատեղակայանքների վերակառուցման շինմոնտաժային՝ ղեկավարման շենքի արհեստանոցի, ենթակայանի աշխատասենյակների վերակառուցման, ինչպես նաև ներքին ճանապարհների ասֆալտապատման, ենթակայանի արտաքին ցանկապատի կառուցման աշխատանքները: Ենթակայանի վերակառուցման աշխատանքների ավարտը սահմանված էր 2024թ., սակայն Կապալառուի կողմից սարքավորումների ներկրման ու կարգաբերման աշխատանքների իրականացման ժամկետների շեղումներով պայմանավորված՝ աշխատանքները կավարտվեն ուշացմամբ, աշխատանքների մի մասի իրականացումը տեղափոխվել է 2025թ.: Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում		

			իրականացվել են մոտ **118,5 հազ.** ԱՄՆ դոլարի աշխատանքներ:		
		28.4 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները **/2023-2024 թվականներ/**	Միջոցառման շրջանակներում շարունակվել են «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման շինարարական, անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների ներկրման աշխատանքները: Ավարտվել են վերակառուցման 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերով նախատեսված՝ էլեկտրատեղակայանքների տեղակայման շինմոնտաժային և կարգաբերման աշխատանքները: Ենթակայանը սահմանված կարգով ամբողջությամբ դրվել է լարման տակ և շահագործվում է: Կապալառուի կողմից մատակարարվել են ենթակայանի վերակառուցման համար նախատեսված բոլոր սարքեր-սարքավորումները: Ենթակայանի վերակառուցման աշխատանքների ավարտ էր սահմանվել 2024թ. դեկտեմբերի 29-ը: Կապալառուի կողմից 4-րդ փուլի սարքավորումների մատակարարման և շինմոնտաժային աշխատանքների ավարտական փաստաթղթերը ներկայացվել են Պատվիրատուին, սակայն նշված աշխատանքների դիմաց ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունները չեն ընդունվել՝ աշխատանքներում տեղ գտած թերությունների պատճառով: Աշխատանքները կավարտվեն 2025թ.: Հաշվետու ժամանակահատվածում	Սահմանված ժամկետում աշխատանքների չկատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կապալառուի կողմից նշված աշխատանքների դիմաց ներկայացված հանձման-ընդունման արձանագրություն-ները չեն ընդունվել՝ աշխատանքներում տեղ գտած թերությունների պատճառով: Աշխատանքները կավարտվեն 2025թ.:	
		28.4.2 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները **/2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ/**			

			միջոցառման շրջանակներում իրականացվել են մոտ **6,2 մլն** ԱՄՆ դոլարի աշխատանքներ:		
29	Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկա կա ն միջանցք (Հայաստան -Իրան-Վրաստան-Ռուսաստան) քառակողմ նախաձեռնության հետ կապված աշխատանքների իրականացում	29.1 Տեխնիկական խնդիրների կարգավորում, համապատասխան պայմանագրերի կնքում **/2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**	Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան նախաձեռության իրականացման նպատակով 2024թ.-ի ընթացքում շարունակվել են աշխատանքները: Նախաձեռնության խոհրդատուի կողմից մշակվել է նախնական տեխնիկատնտեսկան հիմնավորում, սակայն դեռևս կողմերի միջև չի համաձայնեցվել: Աշխատանքները շարունակվում են:		
		29.1.2 Տեխնիկատնտեսական հիմնավորման մշակում **/ժամկետ՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**			
30	Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցում	30.1.2 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացման ավարտ **/2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**	Միջոցառման շրջանակներում կառուցվող էլեկտրահաղորդման օդային գծի երկարությունը մոտ 268 կմ է: Ծրագրի շրջանակներում նախատեսված 711 հենարանից բետոնացվել է 696 հենարանի հիմք, մոնտաժվել 535-ը, ներմուծվել է 663 ամբողջական հենարան, իրականացվել են մոտ 70 կմ հաղորդալարերի մոնտաժման և լարաձգման աշխատանքներ: Ամբողջությամբ ներմուծվել են ամպրոպապաշտպան ճոպանը և օպտիկամանրաթելային մալուխը: Իրականացվում են դեպի հենարաններ տանող մոտեցման ճանապարհների շինարարության, հենարանների հիմքերի բետոնացման և հենարանների մոնտաժման աշխատանքներ: Նորավան» ենթակայանում գրեթե	Սահմանված ժամկետում միջոցառումների չկատարումը պայմանավորված է վերջիններիս շրջանակներում առկա խնդիրների, այդ թվում՝ ավտոտրանսֆորմատորներից և էլեկտրահաղորդման օդային գծից տեղի ունեցած գողության դեպքերով: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2025թ.:	
		30.2 Շահագործման հանձնել էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը **/2024 թվականի դեկտեմբեր ի 3-րդ տասնօրյակ/**			

			ավարտվել են բարձր լարման սարքավորումների, կոշտ հաղորդաձողային համակարգի մոնտաժման և մալուխային խրամուղիների բետոնացման, ինչպես նաև Բջիջների ղեկավարման շենքի ներքին հարդարման աշխատանքները: Ներմուծվել են ենթակայանի բարձր լարման սարքավորումները, 33 կՎ բջիջները, ցածր լարման պաշտպանության և ղեկավարման սարքավորումները, ուժային և ղեկավարման մալուխները: Ընթացքում են հողանցման համակարգի, ջրահեռացման համակագի և խրամուղու պատի բետոնացման, շենք-շինությունների կառուցման և հողի հետլցման, արտաքին պարսպի բետոնի նախապատրաստական շերտի և պատի շարման, մալուխների փռման, օպերատիվ ղեկավարման և պահակատան շենքերի ներքին հարդարման, մասնավորապես՝ սենյակների պատերի և առաստաղի ծածկման, հատակների պրեսգրանիտե սալիկներով շարման և ներքին էլեկտրամոնտաժային աշխատանքները: Միջոցառման սկզբից մինչև հաշվետու ժամանակահատվածը միջոցառման կապալառու «Սանիր» ընկերությանը (այսուհետ՝ Կապալառու) վճարվել է 86,1 մլն եվրո գումար, այդ թվում՝ էլեկտրահաղորդման օդային գծի		

			մասով՝ 57,64 եվրո, «Նորավան» ենթակայանի մասով՝ 28,46 մլն եվրո:Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի, Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) արտակարգ և լիազոր դեսպան Մեհդի Սոբհանիի, միջոցառումն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և Կապալառուի ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց արդյունքում միջոցառման ֆինանսական հոսքերն ակտիվացնելու, ինչպես նաև միջոցառման առաջընթացն ապահովելու նպատակով Ընկերությունը Իրանի արտահանման զարգացման բանկի (այսուհետ՝ ԻԱԶԲ) վարկային և Ընկերության սեփական միջոցներից Կապալառուին պարբերաբար տրամադրել է կանխավճարներ և փոխառություն՝ ընդհանուր 10,9 մլն եվրոյի չափով, որն ամբողջությամբ չի մարվել, և մնացորդը կազմում է 1,56 մլն եվրո, ինչպես նաև Ընկերությունը 4,050 մլն եվրո գումար տրամադրել է Կապալառուին՝ «Սանիր ինթերնեյշնլ ՖԶԵ» ընկերության կողմից տրամադրված փոխառության մայր գումարից վաղաժամ մարման սկզբունքով՝		

			կնքելով եռակողմ համաձայնագրեր: Միջոցառման շրջանակներում «Նորավան» ենթակայանում 2023թ. ապրիլ ամսին հայտնաբերվել են երկու ավտոտրանսֆորմատորներից (այսուհետ՝ ԱՏ) պղնձե փաթույթների գողության դեպքեր, որի արդյունքում ԱՏ-ները գործնականորեն դարձել են ոչ պիտանի: Կապալառուն հայտնել է, որ վերջիններիս ձեռքբերման համար բավարար ֆինանսական միջոցներ առկա չեն, հետևաբար նոր ԱՏ-ների մատակարարումը վերստին դարձել է անհնար: Հարցը կարգավորելու նպատակով ՀՀ կառավարության 21.11.2024թ. N 1840-Ն որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է 2,070 մլրդ դրամ գումարի չափով բյուջետային վարկ, որից 2024թ՝ 1,035 մլրդ դրամ և 2025թ.՝ 1,035 մլրդ դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 02.12.2024թ. կնքվել է 2024թ. հատկացվելիք 1.035 մլրդ ՀՀ դրամի վարկային պայմանագիրը: 20.12.2024թ. նախատեսված գումարը սահմանված կարգով փոխանցվել է Կապալառուին: Նշված գումարը Կապալառուին վճարման պահից համարվել է մարված՝ Ընկերության և «Սանիր Ինթերնեյշնլ ՖԶԵ» ընկերության միջև կնքված Փոխառության պայմանագրի շրջանակներում «Սանիր Ինթերնեյշնլ ՖԶԵ» ընկերության կողմից		

			Ընկերությանը տրամադրված փոխառությունից վերադարձման ենթակա հիմնական (մայր) գումարից: Միջոցառման իրականացման վերջնաժամկետ էր սահմանված 2024թ. դեկտեմբերի 31-ը, սակայն Միջոցառման շրջանակներում առկա խնդիրների, այդ թվում՝ ավտոտրանսֆորմատորներից և էլեկտրահաղորդման օդային գծից տեղի ունեցած գողության դեպքերի պատճառով սահմանված ժամկետում միջոցառման իրականացումն ավարտին հասցնելը դարձել էր անհնար, ուստի հաշվի առնելով միջոցառման կարևորությունը, ինչպես նաև դրա իրականացման վերաբերյալ երկու երկրների կառավարությունների միջև պայմանավորվածությունները՝ սահմանված կարգով միջոցառման գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը: Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում իրականացվել են մոտ **6,7** մլն եվրոյի վճարումներ:		

31	Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց Հայաստան-Վրաստան էլեկտրահաղոդման գիծ/ենթակայաններ ծրագրի իրականացում	31.2 220/400 կՎ ենթակայանի և 400 կՎ օդային գծի կառուցման, ինչպես նաև բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի մեկնարկ և ավարտ **/2022-2026 թվականներ (շարունակական)/**	Միջոցառման շրջանակներում իրականացվում են Գերմանիայի զարգացման վարկերի (KfW) բանկի (այսուհետ՝ Բանկ) աջակցությամբ իրականացվող Ծրագրի երեք լոտով (Լոտ 1՝ Դդմաշեն ենթակայանի, Լոտ 2՝ Էլեկտրահաղորդման գծերի և Լոտ 3՝ Բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի (ԲԼՀՀՓԿ) կառուցում) գլխավոր կապալառուների ընտրության մրցութային գործընթացներ, այդ թվում՝ Լոտ 1-ի և Լոտ 3-ի մասով հայտատուների բացակայության պատճառով՝ Բանկի առաջարկով մրցույթները չեղարկվել են: Նոր մրցույթները շարունակվելու են «Սահմանափակ մրցակցային սակարկություն» գործընթացով՝ նախապես ընտրված ընկերություններից գնառաջարկի ստացման տարբերակով: Համաձայն Բանկի կողմից հաստատված նախապես ընտրված հայտատուների ցանկի՝ տեղեկատվական գրություններ են ներկայացվել հայտատուներին՝ մրցույթին մասնակցելու նրանց հետաքրքրությունը պարզելու համար: Լոտ 1-ով հաստատել է 7, իսկ Լոտ 3-ով՝ 3 ընկերություններ: Միևնույն ժամանակ վերջնականացվում են մրցութային փաստաթղթերը: Լոտ 2-ի մասով իրականացվում է գլխավոր կապալառուի ընտրության ընթացիկ մրցույթի չեղարկման գործընթացը՝ հաշվի առնելով այն		

			փաստը, որ Kalpataru Projects International limited և KEC International limited ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական հայտերի գները գերազանցում են թարմացված նախահաշվային արժեքը (մոտ 54 մլն եվրո): Սահմանված կարգով ընթացիկ մրցութային գործընթացը հայտարարվել է չեղյալ և իրականացվում է համեմատաբար ցածր գին ներկայացրած KEC International limited հայտատուի հետ գների նվազեցման շուրջ ուղիղ բանակցություններ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են մոտ **1,2** մլն եվրոյի աշխատանքներ:		
32	Վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործում և զարգացման խթանում	32.2 «Այգ-1 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում **/2026 թվական, շարունակական/**	ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 25-ի N1167-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել «Հայաստանում՝ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների միջև «ԱՅԳ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման մասին կառավարության աջակցության համաձայնագրում, որով կայանի Շինարարության Մեկնարկի Ամսաթիվը սահմանվել է «2025 թվականի դեկտեմբերի 1-ը»: Կայանը շահագործման կհանձնվի 2027 թվականի դեկտեմբերին:		
		32.2.2 «Այգ-1 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ **/2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**			

		32.3 Աջակցել գումարային մոտ 500 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրական կայանների կառուցման մասնավոր ծրագրերի իրականացման և ներդրումային ծրագրերի հաստատման գործընթացներին **/2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**	Հողմային էլեկտրական կայանների կառուցման ներդրումային ծրագրերի մշակման նպատակով Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվում է «Հողմային էլեկտրաէներգիայի արտադրության պոտենցիալ նախագծերի կենսունակության գնահատում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)։ Ծրագրի տեխնիկական խորհրդատուն Տետրա Տեք ընկերությունն է։ Ծրագրի շրջանակներում իրականացվել են նորագույն տեխնոլոգիաներով քամու ներուժի չափումներ, հաշվարկներ, օպտիմալ տեղանքների ընտրություն և վերլուծություններ։ Մասնավորապես, ուսումնասիրությունների և բազմաթիվ չափանիշների կիրառմամբ 6 հեռանկարային տարածքներից ընտրվել են առավել հեռանկարային 3-ը՝ Կարախաչի լեռնանցք, Ջաջուռի լեռնանցք և Սիսիան-Գորիս լեռնանցք։ Ներկայումս իրականացվում են նաև ներդրումային փաթեթի մաս կազմող՝ բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման պլանի պատրաստման աշխատանքները։		
		32.3.2 Ներդրումային ծրագրերի մշակում **/ժամկետ՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**			
36	Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման	36.1 Բնակարանների և անհատական տների էներգաարդյունավետ վերանորոգման համար	2024թ. էականորեն աճել է բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ		

	աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացում	պետական աջակցության ցուցաբերում **/2025 թվականի հուլիսի 1/**	վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի շահառուների թիվը։ 2024թ արդյունքներով՝ շահառուների թիվը- 23254, տրամադրված վարկերը - 53 մլրդ դրամ, պետական բյուջեից սուբսիդավորումը – 3,3 մլրդ դրամ։ ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N239-Լ, որոշմամբ միջոցառման ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի հուլիսի 1-ը։		
37	Կանոնավոր ուղևորափոխադրումների կանոնակարգում	37.1 Միասնական երթուղային ցանցի ներդրում **/2024 թվականի դեկտեմբեր/**	Միջոցառման շրջանակներում ամբողջովին ներդրվել են Կոտայքի մարզի և Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցերը։ Դատական կարգով վիճարկվում են Արարատի մարզի և Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորների ընտրության մրցույթների արդյունքները։ Շիրակի մարզի միասնական օպերատորի ընտրության մրցույթները չեն կայացել հայտերի բացակության պատճառով։ 2024 թվականին կայացած Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների և Արագածոտնի մարզի միասնական երթուղային ցանցերը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթների արդյունքում համապատասխանաբար սպասարրկող օպերատորներ են		

			ընտրվել «Գ-Արքունիք» ՍՊԸ-ն և «Մուլտի Տրանսպորտ» ՍՊԸ-ն։ 2024 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցի սպասարկման մրցույթը չի կայացել հայտատուի կողմից մրցույթին կարգի պահանջները չբավարարելու պատճառով։ Միասնական երթուղային ցանցի ներդրման գործընթացը դյուրացնելու և առկա կարգավորումները առավել հստակեցնելու նպատակով մշակվել և 12.07.2023թ. ընդունվել է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ—250-Ն օրենքը և հարակից օրենքները։ Դրանց կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 18.05.2023թ. N 750-Ն և 05.10.2023թ. N 1714-Ն որոշումներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված մրցութային կարգում և ընդունվել է ՀՀ կառավարության 08.08.2024թ. «Կանոնավոր ուղևորափոխադ-րումների երթուղիների փոխադրավարձը սահմանելու պահանջները սահմանելու մասին» N 1253-Ն որոշումը։		

			Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Մարտունի տարածաշրջանների միասնական օպերատորի ընտրության 2025 թվականի հունվարի 24-ին հայտարարված մրցույթը չի կայացել, հայտերի բացակայության պատճառով։ Միասնական երթուղային ցանցի ներդրման գործընթացը շարունակվում է։		
		37.2 Երթուղիների քարտեզավորում, էլեկտրոնային տոմսավորման համակարգի և էլեկտրոնային երթակարգավարական ծառայության ներդրում **/2024 թվականի դեկտեմբեր/**	Միասնական երթուղային ցանցի ներդրման շրջանակներում ստեղծվել է ներմարզային և միջմարզային երթուղային ցանցի մոդելավորման, օպտիմալ երթուղիների մշակման և դրանց շահագործման գործընթացի վերահսկողության ծրագրային համակարգը, որի վերջնական գործարկումից հետո դրա միջոցով կներդվեն էլեկտրոնային տոմսավորման համակարգը և էլեկտրոնային երթակարգավարական ծառայությունը։ Ծրագրային համակարգի գործարկումը հնարավոր կլինի բոլոր մարզերի միասնական երթուղային ցանցերը ներդնելուց հետո։ Ծրագրային համակարգում մուտքագրվել են Կոտայքի մարզի միասնական երթուղային ցանցի բոլոր տվյալները, իսկ երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների տեղորոշման համակարգերը միացվել են ծրագրային համակարգին։		

38	ՀՀ-ում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրում	38.1 ՀՀ-ում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրում **/2024 թվականի դեկտեմբեր/**	Հայտարարվել է համակարգի ներդրման երկփուլ մրցույթ: 2023թ. օգոստոսին իրականացվել է հայտերի գնահատում: Մրցույթի աշխատանքները շարունակվում են: ՏԿԵՆ-ի կողմից հայտ է ներկայացվել միջոցառման համար 2024 թվականի բյուջեում 630 մլն դրամ ֆինանսական միջոցներ հատկացնելու համար:		
		38.2 Ճանապարհային վճարների գանձման էլեկտրոնային համակարգի ներդրում **/2024 թվականի դեկտեմբեր/**	Ճանապարհային վճարների գանձման էլեկտրոնային համակարգի ներդրման շրջանակներում մշակվել է ««Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվելուց հետո ներկայացնել է Վարչապետի աշխատակազմ: Օրենսդրական փաթեթը քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2023 թվականի մարտի 6-ի նիստում, որի N ԿԱ/65-2023 արձանագրության 2-րդ կետի հանձնարարականի համաձայն՝ օրենսդրական փաթեթը		

			լրամշակվել և կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը: Օրենսդրական փաթեթը քննարկվել է նաև ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում: Համակարգի ներդրումը հնարավոր կլինի օրենսդրական փաթեթի ընդունումից հետո: 2024 թվականի սեպտեմբերի 4-ին կայացած ճանապարհների օժանդակ ենթակառուցվածքների վերաբերյալ նիստի ընթացքում քննարկված բեռնատար տրանսպորտային միջոցների կշռման համակարգի ներդրման և բեռնատար տրանսպորտային միջոցներով ճանապարհներին հասցվող վնասի գնահատման հետ կապված հարցերի շրջանակներում քննարկվել է ճանապարհային վճարի գանձման էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթացը, որի շրջանակներուում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը դիմել է Հաղորդակցության արևելյան գործընկերության ներդրումային հիմնադրամին (EPIC) Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային վճարի գանձման և կշռման համակարգի ներդրման համար ուսումնասիրություն իրականացնելու համար:		
		38.3 Բեռնատար տրանսպորտային	Իրականացվում են աշխատանքներ ճանապարհների վրա ծանրաքաշ մեքենաների կշռման նպատակով		

		միջոցների կշռման համակարգի ներդրում **/2024 թվականի դեկտեմբեր/**	հնարավորինս լայն սփռված կշեռքների ցանց ստեղծելու համար: Ներկայումս արդեն իսկ ձեռք բերված 2 անշարժ էլեկտրոնային կշեռքներից մեկը տեղադրված է ՀՀ Սյունիքի մարզի, Շաքիի վարչական տարածքում, ընդհանուր օգտագործման Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի 200-րդ կմ-ի վրա, իսկ երկրորդը տեղադրված է ՀՀ Արմավիրի մարզի Զվարթնոցի հարակից տարածքում: 2 անշարժ և 1 շարժական կշեռքների միջոցով Բեռնատար տրանսպորտային միջոցների կշռման համակարգի ներդրման նպատակով Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքները համակարգող գրասենյակը հայտարարել է Հայաստանի Հանրապետության տարածքում ծանրաքաշ մեքենա-ների կշռման համակարգի ներդրման ծառայությունների ձեռքբերման ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/2 ծածկագրով մրցույթ: Երկփուլ մրցույթի շրջանակներում առաջին փուլին հայտ ներկայացրած մասնակիցների հետ առցանց բանակցությունները կայացել են 2023թ. օգոստոսի 23-ին: Ներկայումս մրցույթի արդյունքները դեռևս չեն ամփոփվել: ՀՀ փոխվարչապետ Տ. Խաչատրյանի մոտ 2024 թվականի սեպտեմբերի 4-ին կայացած ճանապարհների օժանդակ ենթակառուցվածքների վերաբերյալ նիստի ընթացքում		

			քննարկվել են բեռնատար տրանսպորտային միջոցների կշռման համակարգի ներդրման և բեռնատար տրանսպորտային միջոցներով ճանապարհներին հասցվող վնասի գնահատման հետ կապված հարցերը: Նշված նիստի N ՓՎ/116-2024 արձանագրության 4-րդ կետի 1.3-րդ ենթակետով հանձնարարվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ ներքին գործերի նախարարություններին համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկներ ճանապարհային վճարի կառավարման համակարգի բարեփոխումների վերաբերյալ: Հանձնարարականի կատարման նպատակով ներկայումս Ներքին գործերի նախարարության հետ քննարկվում է վերջինիս կողմից ներդրվող էլեկտրոնային համակարգին ճանապարհային վճարի գանձման համակարգը կոնսոդիլացման հարցը, որի շրջանակներում կկատարվի տրանսպորտային միջոցների կշռման համակարգի ներդրման միջոցառումը: Միջոցառման կատարումը ավարտին կհասցվի 38.2-րդ կետի միջոցառման հետ համատեղ:		

39	Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի կանոնակարգում	39.2. «Տրանսպորտի բնագավառի բարեփոխումների և շուկայի կարգավորման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում **/2024 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ/**	Աշխատանքներ են իրականացվում «Խաղաղության խաչմերուկ» նախագծի շրջանակներում տրանսպորտի բնագավառի զարգացման ռազմավարության մշակման ուղղությամբ: Այդ նպատակով հայկական կողմը դիմել է ԱՄՆ-ի ՄԶԳ-ին գործընթացի շրջանակներում աջակցություն ստանալու համար: ՄԶԳ-ի կողմից բավարարվել է հայկական կողմի խնդրանքը, որի արդյունքում վերը նշված ռազմավարության մշակման համար ընտրվել է ամերիկյան Տետրա Տեք ընկերությունը: Տետրա Տեք ընկերությունը սկսել է անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման աշխատանքները, որոնց արդյունքում կմշակվեն ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը: Համաձայն Տետրա Տեք ընկերության կողմից ներկայացված ժամանակացույցի՝ նախատեսվում է աշխատանքներն ավարտին հասցնել 2025 թվականի հունիս ամսին:		
40	Շահագործվող տրանսպորտային միջոցների թարմացում	40.1 Օգտահանման օրենսդրության մշակում **/2024- 2025թթ./**	Մշակվել է ««Թափոնների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը շահագրգիռ մարմինների հետ քննարկման արդյունքում լրամշակվելուց հետո 25.12.2024թ. N		

			ԴԽ/25.2/41886-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:		
41	Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի և երկարակեցության շարունակական բարձրացում	41.1 Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նորոգում (հիմնանորոգում, միջին նորոգում), վերակառուցում և կառուցում **/2021-2026թթ./**	1. Միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի և երկարակեցության շարունակական բարձրացման նպատակով 2024 թվականին նախատեսված ճանապարհահատվածների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման համար 31.12.2024թ-ի դրությամբ կնքված պայմանագրերի շրջանակներում նախատեսվել և համաձայնագրեր են կնքվել շուրջ 335.3 կմ ընդհանուր երկարությամբ թվով 75 ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների մասով, որից նշված ժամկետի դրությամբ իրականացվել են 333.0 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների շինարարական աշխատանքներ, իսկ մնացածի մասով աշխատանքները դեռևս գտնվում են իրականացման փուլում: Նշված միջոցառման շրջանակներում վերոնշյալ ժամկետի դրությամբ ՀՀ կառավարության մի շարք որոշումներով ՏԿԵ նախարարությանը հատկացվել է շուրջ 56.2 մլրդ. ՀՀ դրամ: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված կատարողականների		

			ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 52.0 մլրդ. ՀՀ դրամ: 2. 2024 թվականին նախատեսված ճանապարհահատվածների միջին նորոգման համար կնքված պայմանագրերի շրջանակներում նախատեսվել և համաձայնագրեր են կնքվել շուրջ 123 կմ ընդհանուր երկարությամբ թվով 14 ճանապարհահատվածների մասով և 1 պայմանագիր մետաղական արգելափակոցի տեղադրման մասով, որից 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացվել են շուրջ 123 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների շինարարական աշխատանքներ: 2024թ-ի շինարարական աշխատանքների համար վերը նշված ժամկետի դրությամբ կնքված համաձայնագրերի ընդհանուր արժեքը կազմում է 5,92 մլրդ դրամ, որից՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված կատարողականների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 5,67 մլրդ. ՀՀ դրամ, որից 108,7 մլն. ՀՀ դրամը՝ 2023թ. մնացած պայմանագրերի դիմաց կատարվող վճարումներն են:		
42	Թունելների և կամուրջների վերականգնում և կառուցում	42.1 Թունելների և կամուրջների հիմնանորոգում, նորոգում, վերակառուցում, մասնավորապես՝ Դիլիջանի	***Կամուրջներ*** «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում 2024 թվականին կնքված կապալի պայմանագրերի		

		և Պուշկինի թունելների վերականգնում **/2021-2026թթ./**	շրջանակներում կնքվել են թվով 10 հատ տրանսպորտային օբյեկտների (7 հատ կամուրջ, 3 հատ տրանսպորտային հանգույց) շինարարական աշխատանքների համար համաձայնագրեր: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 8 օբյեկտի (7 կամուրջ, 1 տրանսպորտային հանգույց) շինարարական աշխատանքներն ավարտվել են, իսկ մնացածի մասով աշխատանքների ավարտը նախատեսված է 2025 թվականի ընթացքում: Նշված միջոցառման շրջանակներում 2024թ. հատկացվել են 1.8 մլրդ. ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված կատարողականների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 1,5 մլրդ. ՀՀ դրամ: ***Թունելներ*** ***Պուշկինի թունելի*** վերականգնման նախագծի նախնական էլեկտրոնային տարբերակը (անգլերեն) Նախագծողի կողմից ներկայացվել է: Նախարարության կողմից ներկայացված դիտարկումներին համապատասխան նախագիծը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում: ***Դիլիջանի թունելի*** մասով որոշվել է մշակել ոչ թե վերականգնման, այլ նոր թունելի կառուցման նախագիծ: Նախագծող խորհրդատուի կողմից լրացուցիչ ուսումնասիրությունները և		

			նախագծային աշխատանքները կիրականացվեն պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո: Պայմանագրի փոփոխությունները համաձայնեցվել են ԱԶԲ-ի հետ: Փոփոխությունների քննարկումն ու հաստատումը կիրականացվի ՀՀ փոխվարչապետի գլխավորած Ծրագրի կառավարման խորհրդի հերթական նիստում: Դիլիջանի նոր թունելի կառուցման նախագծի ներկայացման ժամկետը վերանայվել է՝ հաշվի առնելով նախագծող խորհրդատուի պայմանագրում կատարվող փոփոխությունների հաստատման ժամկետը: ***Նալբանդի թունելի*** հիմնանորոգման համար «Ճաննախագիծ» ինստիտուտ ՍՊ ընկերության կողմից իրականացվել են թունելի նախագծման աշխատանքները, որոնք ստացել են փորձաքննության դրական եզրակացություն: Թունելի հիմնանորոգման ժամկետները ու ֆինանսական աղբյուրները գտնվում են քննարկման փուլում:		
43	Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավում	43.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ճանապարհային երթևեկության	2024թ. ընթացքում ճանապարհների հիմնանորոգման, վերակառուցման աշխատանքների շրջանակներում տեղադրվել են շուրջ 9433 ճանապարհային նշաններ և 121294 գծ/մ մետաղական արգելափակոցներ:		

		կազմակերպման տեխնիկական միջոցներով (ճանապարհային նշաններ, ճանապարհային լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ, ճանապարհային գծանշում) վերազինում **/2022-2026թթ./**	Ճանապարհների անվտանգության տարրերի վերականգնման ուղղությամբ՝ ճանապարհների սպասարկման շրջանակներում, միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին վերականգնվել և տեղադրվել է 2275 հատ ճանապարհային նշան և 27192 գծմ մետաղական արգելափակոց, ինչպես նաև շուրջ 80 զբոսաշրջային օբյեկտ ցույց տվող նշաններ։ Կատարվել են միջպետական և հանրապետական ճանապարհների 552404 քմ գծանշման աշխատանքներ։ Ավարտվել են ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 2800 քմ ջերմաթաղանթով հետիոտնային անցումների, 5470 քմ ջերմաթաղանթով հորիզոնական գծանշումների, 3015 քմ ջերմաթաղանթի ֆրեզավորման, 610 հատ համապատասխան ճանապարհային նշանների և 2016 քմ աղմկոտ գոտիների կահավորման աշխատանքների իրականացումը։		
44	Ճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացում՝ «սև կետերի» բարելավում	44.1 ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների «սև կետերի» գույքագրում և դրանց վերացման նպատակով ճանապարհատրանսպորտ	1. «Հայաստանում ճանապարհային անվտանգության վերափոխում» ծրագրի աջակցությամբ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Հայաստանում ճանապարհային անվտանգության վերափոխում։ Հայաստանում ճանապարհային անվտանգության տվյալների, մարդկանց և		

		այի և պատահարների տվյալների վերլուծության հիման վրա անվտանգության միջոցառումների շարունակական իրականացում **/2022-2026թթ./**	քաղաքականության միացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանում ԿԶՆ ազգային նորարարական կենտրոնի (SDG Innovation Lab) միջոցով իրականացվել է համակարգի փորձարկման (պիլոտավորման) աշխատանքները, այդ թվում՝ ճանապարհի մի շարք վթարավտանգ հատվածների՝ կուտակման կետերի (Black spots) բացահայտման և համապատասխան քարտեզագրումը, որի արդունքում Մ-1, Երևան-Գյումրի-ՀՀ սահման (Բավրա) միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ 14+700 և կմ17+400 հատվածներում հետիոտների անցման անվտանգությունն ապահովելու նպատակով տեղակայվել է հետիոտնի «կանչի» ռեժիմով լուսացուցային օբյեկտ՝ համապատասխան ճանապարհային նշաններով և գծանշումներով: Աշխատանքները ընդունվել են շահագործման: 2. Միջազգային ավտոմոբիլային ֆեդերացիայի (FIA) և International Road Assesment Program (Ճանապարհների գնահատման միջազգային ծրագիր՝ iRAP ֆինանսական և մեթոդաբանական աջակցությամբ Ավտոարտադրողների պաշտոնական ներկայացուցիչների ասոցիացիան և Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիան իրականացրել են Star Rating for		

			Schools (Դպրոցների աստղային վարկանիշ, SR4S) ծրագիրը Գյումրի և Վանաձոր քաղաքների դպրոցների համար: Նշված շրջանակներում գնահատվել են շուրջ 40 դպրոցներ Գյումրի և Վանաձոր քաղաքներում, կազմվել է գնահատված տեղամասի աստղային վարկանիշը: Հիշյալ կազմակերպությունների մասնակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում քննարկվել է գնահատված 40 տեղանքները, որոնցից ընտրվել են ճանապարհներին մոտ գտնվող ամենավտանգավոր տեղամասերը: Տեղում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հետևյալ երկու տեղամասերում կատարվել են հետևյալ ճանապարհային անվտանգության բարելավման աշխատանքները. ➢ Մ-7, /Մ-3/- Սպիտակ-Գյումրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ճանապարհի Գյումրի քաղաքով անցնող հատվածում, թիվ 24 դպրոցի հատվածում հետիոտների անցման անվտանգությունն ապահովելու նպատակով տեղակայվել է հետիոտնի «կանչի» ռեժիմով լուսացուցային օբյեկտ՝ համապատասխան ճանապարհային նշաններով և գծանշումներով: Կատարված		

			աշխատանքները դեռևս չեն ընդունվել շահագործման. ➢ Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 10 դպրոցի հատվածում իրականացվել են հետիոտների անցման անվտանգության բարձրացման միջոցառումներ: Կատարված աշխատանքները դեռևս չեն ընդունվել շահագործման: 3. ՄԺԾԾ 2025-2027 թվականների և ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի հայտով որպես նոր նախաձեռնություններ ներկայացվել են ճանապարհային անվտանգության բարելավման մի շարք միջոցառումներ: Քննարկումների արդյունքում 2025 թվականի պետական բյուջեյում ներառվել է «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վթարավտանգ հատվածների վերացում» միջոցառումը, որի շրջանակներում 2025 թվականին նախատեսվում է ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա իրականացնել թվով 10 հատվածների վթարավտանգ հատվածների՝ կուտակման կետերի (Black spots) բարելավման միջոցառումներ:		
46	«Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի իրականացման շարունակություն	46.5 Տրանշ 3՝ Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի, 42 կմ ճանապարհահատվածի շինարարական	***Թալին-Լանջիկ՝ 18.7կմ հատված*** Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքներն		

		աշխատանքների իրականացում **/2023-2024թթ./**	ավարտված են: Ընթանում են թերությունների վերացման աշխատանքները: ***Լանջիկ-Գյումրի՝ շուրջ 23 կմ հատված*** Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի ասֆալտապատման աշխատանքներն ավարտված են: Ընթանում են անվտանգության տարրերի տեղադրման աշխատանքները:		
48	Հյուսիսային միջանցքի արդիականացում	48.1 Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի նոր կամրջի շինարարություն **/2022-2024թթ./**	Սույն միջոցառումն իրականացվել է ՎԶԵԲ-ի վարկային միջոցներով: 2022թ. օգոստոսի 14-ին կամուրջը հանձնվել է շահագործման Ծրագրի տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից, իսկ նույն թվականի օգոստոսի 19-ին տեղի է ունեցել նոր կամրջի պաշտոնական բացման միջոցառումը՝ երկու երկրների Վարչապետների մասնակցությամբ: Թերությունների հայտնաբերման նպատակով Տեխնիկական հսկողության ընկերության կողմից իրականացվել է շրջայց և ներկայացվել թերությունների ցանկը ներառող հաշվետվությունը, ինչի հիման վրա Կապալառու ընկերության կողմից ավարտվում են թերությունների վերացման աշխատանքները: Ընթացքի մեջ է ավարտական ակտի ստորագրման գործընթացը:		

51	Ճանապարհային անվտանգության համակարգի ներդրում	51.2 Ճանապարհային աուդիտի համակարգի ձևավորում (ճանապարհային աուդիտի անցկացման պահանջների ձևավորում, ընթացակարգերի սահմանում, աուդիտորների որակավորում) **/2024-2026թթ./**	Ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացման գործառույթները ներառվել են «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենքի) նախագծում, որը սույն թվականի հունիսի 12-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Նշված հիման վրա մշակվել և ՀՀ վարչապետի 02.10. 2024թ. թիվ 887-Ա որոշմամբ հաստատվել է Օրենքի կիրարկումը ապահովող միջոցառումների ցանկը, որի 14-րդ կետով նախատեսվում է մինչև 2025 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակը մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացման կարգը, ճանապարհային անվտանգության աուդիտորի իրավունքները և պարտականությունները, ճանապարհային անվտանգության աուդիտորի որակավորման պահանջները, վերապատրաստման իրականացման կարգը, որակավորման վկայականի տրամադրման կամ մերժման հիմքերը և ժամկետներն ու լրացուցիչ աուդիտի նշանակման դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Օրենքով նախատեսվում է, որ աուդիտի կենթարկվեն նախ և		

			առաջ միջպետական ճանապարհները՝ սկսած 2025թ. հուլիսից, այնուհետև հանրապետական նշանակության ճանապարհները՝ 2026թ-ից, իսկ հետո նաև մարզային (տեղական) նշանակության ճանապարհները՝ 2027թ-ից: Ներկայումս ուսումնասիրվում է ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացման միջազգային փորձը: Նշենք նաև, որ նշվածի շրջանակներում 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի և 2025-2027 թվականների ՄԺՈՇ ՏԿԵՆ հայտով որպես նոր նախաձեռնություն առաջարկվել է նաև «1049. Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրում ներառել «Ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացում» նոր միջոցառումը, որը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մերժվել էր և 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով այդ նպատակով ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:		
53	Ճանապարհների պետական գրանցում	53.1 Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների չափագրում և պետական գրանցում **/2022-2026թթ./**	ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսվում է, որ սույն միջոցառումը կարող է իրականացվել ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Նշվածի շրջանակներոում 2024 թվականի պետական բյուջեով որպես նոր նախաձեռնություն և նոր միջոցառում ներառելու		

			առաջարկությունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մերժվել է և 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել, միջոցառումը չի իրականացվել: 2024թ. նախատեսվում էր իրականացնել պիլոտային ծրագիր: Միաժամանակ, 2025-2027թթ. ՄԺԾԾ հայտով ճանապարհների պետական գրանցման միջոցառումը որպես նոր նախաձեռնություն ներգրավելու առաջարկությունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կրկին մերժվել է: Նշվածով պայմանավորված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն առաջարկել էր միջոցառումը հանել գործողությունների ծրագրից, ինչի կապակցությամբ Կադաստրի կոմիտեն ներկայացրել էր առարկություններ, ինչով պայմանավորված, միջոցառումը թողնվել է անփոփոխ: Նշենք, որ Կադաստրի կոմիտեն առաջարկել է դիտարկել «Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների գրանցում» միջոցառման իրականացումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 47.1-ին հոդվածի 5-12-րդ մասերով սահմանված կարգով նախատեսելու նպատակահարմարության հարցը, ինչը անընդունելի է ՀՀ տարածքային կառավարման և		

			ենթակառուցվածքների նախարարության կողմից: Նշենք, որ Կադաստրի կոմիտեի կողմից դեռևս 2023 թվականից ՀՀ Շիրակի մարզում իրականացվում է օրթոլուսանկարների երկրաչափական համապատասխանեցում և ճանապարհների սահմանների հետ համադրում՝ ճանապարհների փորձնական քարտեզագրում: Սակայն օրթոլուսանկարների միջոցով հնարավոր չէ ճշգրտորեն իրականացնել ճանապարհների չափագրումը, առանց հաշվի առնելու ռելիեֆը, ուստի ճանապարհների չափագրումը նման եղանակով իրականացնելու դեպքում առկա է անճշտությունների թույլատրման, հավանականության ռիսկը՝ հետևաբար նաև Պետական սեփականության փոշիացման ռիսկը: Ուստի ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների չափագրումն անհրաժեշտություն է:		
55	Ճանապարհային ենթակառուցվածքներ ի վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում և մեղմացնող գործողությունների իրականացում	55.1 ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայական փոփոխությունների ռիսկերի գնահատում և ընթացիկ աշխատանքներում կլիմայի	Միջոցառումն իրականացվում է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայական փոփոխությունների ռիսկերի գնահատում ծրագրով: Նշվածի շրջանակներում 2024 թվականին «Գեոռիսկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից իրականացվում է ՀՀ ընդհանուր		

		փոփոխության հարմարվողականության ծրագրի մշակում և իրականացում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան **/2024-2026թթ./**	օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայի և աղետների ռիսկերի վերլուծություն (ընկերության հետ պայմանագիրը կնքվել է 2024 թվականի հոկտեմբեր ամսին)։ ԱԶԲ և Ընկերություն փորձագետների հետ մի քանի անգամ տեղի են ունեցել քննարկումներ՝ կապված աշխատանքների իրականացման հետ։ Աշխատանքները գտնվում են իրականացման փուլում։ Ընկերությունը ԱԶԲ-ին է ներկայացրել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, որը գտնվում է ուսումնասիրության փուլում։ Նշված՝ շրջանակներում Ընկերության կողմից կատարված վերլուծությունների և առաջարկությունների հիման վրա 2025 թվականին միայն հնարավոր կլինի մշակել ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայական ռիսկի կառավարման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիր։ Միաժամանակ՝ Ծրագրի շրջանակներում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից կատարվել է Հայաստանի տարածքում կլիմայական փոփոխությունների ռիսկերի, ՀՀ տարածքի տարբեր հատվածներում օդի ջերմաստիճանի փոփոխությունների և տեղումների		

			փոփոխության դինամիկան, ինչպես նաև ճանապարհային տարրերի վրա կլիմայական ազդեցությունների ընդհանուր նկարագրությունը: Իրականացված հետազոտության նպատակն է ստանալ պատկեր, թե ըստ տարբեր տարածաշրջանների՝ փոփոխությունների ինչպիսի օրինաչափություն է դիտվում, ու դրա հիման վրա ստանալ Հայաստանի Հանրապետության ջերմաստիճանների, կլիմայական փոփոխությունների քարտեզ, որը կիրառելի կլինի ճանապարհների նախագծման համար:		
56	Ճանապարհային ոլորտի մասնագետների և կազմակերպությունների կարողությունների զարգացում	56.1 Յուրաքանչյուր տարի ճանապարհային ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման տարեկան ծրագրի մշակում և դասընթացների կազմակերպում **/2022-2026թթ./**	2024 թվականի ընթացքում տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում իրականացվել են 20-ից ավել վերապատրաստումներ, աշխատաժողովներ, ինչպես նաև համաժողովներ: Մասնավորապես, նշված ժամանակահատվածում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման նպատակով իրականացվել են ավտոմոբիլային ճանապարհների ոլորտին առնչվող թվով 17 վերապատարաստումներ,		

			աշխատաժողովներ և սեմինարներ, ինչպես նաև 3 համաժողովներ:		
		56.2 Ճանապարհային ոլորտում ընդգրկված առանցքային սուբյեկտների (պատվիրատուներ, նախագծողներ, կապալառուներ, տեխնիկական հսկողություն իրականացնողներ և այլն) կարողությունների գնահատման և դրանց բարձրացման մեխանիզմների սահմանում **/2022-2026թթ./**	1. ԱԶԲ աջակցությամբ 2024թ օգոստոսի 27-ից 30-ը կայացել է ճանապարհային անվտանգության և սև կետերի մոնիթորինգի վերաբերյալ քառօրյա դասընթացը, որին մասնակցել են նաև Ճանապարհային ոլորտի նախագծային և շինարարական կազմակերպությունները: Դասընթացը վարել է ճանապարհային անվտանգության ոլորտի միջազգային փորձագետը: 2. 2024 թվականի հունիսի 12-ից 13-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացած Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների շինարարական ֆորումին մասնակցել են նաև խորհրդատվական և կապալառու կազմակերպությունների ներկայացուցիչները: 3. 2024 թվականի նոյեմբերի 1-ին ՏԿԵՆ կազմակերպել է գիտական սեմինար՝ «Ճանապարհային նախագծերում երթևեկության թերի կամ սխալ կազմակերպման ազդեցությունն անվտանգության վրա» թեմայով, որի ընթացքում սեմինարին մասնակցող նախագծային կազմակերպություններին ներկայացվել է ՀՀ կառավարության որոշումներում 2023 թվականին կատարված փոփոխությունները և լրացումները, նախագծերում		

			հաճախ հանդիպող սխալներ՝ կապված ճանապարհային նշանների և գծանշումների կիրառումը համապատասխան ճանապարհային պայմաններին, ավելորդ ճանապարհային նշանները և դրանց բացասական հետևանքները, դրանց տեղակայման վայրերը, չափսերն ըստ ճանապարհների կարգի, և այլն:		
59	Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների կանխարգելում	59.1 Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և ճանապարհային երթևեկության անվտանգությանը սպառնացող օբյեկտների ապամոնտաժման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ **/2023-2026թթ./**	2023 թվականին ՀՀ Արմավիրի մարզով անցնող, բնակավայրերից դուրս գտնվող ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին հարող հատվածներում կառուցված կամ կառուցվող օբյեկտների, շինությունների գույքագրման աշխատանքների շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 23.03.2023թ. N 484-Ա հրամանով ձևավորված աշխատանքային խմբի անդամների քննարման արդյունքում գույքագրված օբյեկտներից, սկզբնական փուլում, առանձնացվել է ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2404-Ն որոշման 4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի և ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերի (այսուհետ՝ Օրենսդրություն) պահանջների խախտմամբ կառուցված կամ կառուցվող օբյեկտների ցանկը (այն է՝ բնակավայրերից դուրս տարածքներում ճանապարհի		

			կողային տեսանելիությունը հաշված երթևեկելի մասի եզրից՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների համար պետք է ապահովի՝ 18.0 մետր հեռավորությունը, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների համար՝ 15.0 մետր), ինչով պայմանավորված ***2024 թվականին*** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի միջոցով առաջարկել է ՀՀ Արմավիրի մարզի համապատասխան համայնքների ղեկավարներին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն միջոցներ ձեռնարկել գույքագրված 233 օբյեկտներից թվով 40 ինքնակամ կառուցված օբյեկտների քանդման (ապամոնտաժման) ուղղությամբ։ 2024 թվականի ընթացքում իրականացվել են ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզերում բնակավայրերից դուրս գտնվող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին հարող հատվածներում կառուցված շենք-շինությունների գույքագրման աշխատանքներ, որոնց արդյունքում արձանագրվել է հետևյալը. 1. ՀՀ Արագածոտնի մարզով անցնող Մ-1, Մ-3, Հ-21, Հ-75, Հ-86, Հ-		

			62, Հ-19, Հ-20 և Հ-4 ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում գույքագրված 249 օբյեկտներից թվով 183-ը՝ չեն համապատասխանում Օրենսդրության պահանջներին. 2. ՀՀ Կոտայքի մարզով անցնող Մ-1, Մ-4, Հ-1, Հ-2, Հ-3, Հ-4, Հ-5, Հ-6 և Հ-28 ճանապարհներին հարող տարածքներում գտնվող 579 օբյեկտներից թվով 497-ը՝ չեն համապատասխանում Օրենսդրության պահանջներին։ Նշվածի շրջանակներում գույքագրված օբյեկտների ցանկերը ուղարկվել են ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզպետների աշխատակազմերին համապատասխան պարզաբանումներ ստանալու համար:		
61	Դեպի «ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր գրունտային ճանապարհի կառուցում	61.1 «Ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր տանող գրունտային ճանապարհների կառուցում **/2023-2026թթ/**	Սույն միջոցառման շրջանակներում նախատեսվում է կառուցել շուրջ 60կմ գրունտային ճանապարհ: ՏԿԵ նախարարի հանձնարարականով մարզպետների աշխատակազմերը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կազմակերպել են դեպի «Ալպյան» մարգագետիններ (դաշտավայրեր, արոտավայրեր և խոտհարքներ) տանող գրունտային ճանապարհների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի (այսուհետ՝		

			Նախագիծ) ձեռքբերման գործընթաց: Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզպետների աշխատակազմերի կողմից 2024թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ձեռք են բերվել փորձաքննության դրական եզրակացություն ստացած Նախագծերը: Արարատի և Սյունիքի մարզպետների աշխատակազմերի կողմից Նախագծի ձեռքբերման մրցույթները կայացել են և կնքվել են պայմանագրեր, իսկ Նախագծի պատրաստման համար ֆինանսական միջոցները կհատկացվեն 2025 թվականին: Միաժամանակ, Արագածոտնի և Շիրակի մարզպետների աշխատակազմերի կողմից Նախագծի ձեռքբերման մրցույթները բազմիցս վերահայտարարվել են, սակայն մասնակից չլինելու հանգամանքով պայմանավորված՝ գնման ընթացակարգերը համարվել են չկայացած: Արմավիրի մարզում գրունտային ճանապարհների կառուցման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ Փարաքար համայնքում առկա դաշտավայրեր, արոտավայրեր և խոտհարքներ տանող գրունտային ճանապարհները վերանորոգվել են Փարաքար համայնքի ուժերով: Քննարկվում է ՀՀ մարզերում գրունտային ճանապարհների կառուցումը համապատասխան		

			համայնքների կողմից իրականացնելու հարցը: Միաժամանակ, սույն միջոցառման ժամկետը երկարաձգվել է մինչև 2026թ.: Փոփոխությունը պայմանավորված է 2025-2027թթ. ՄԺԾԾ հայտով «Ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր տանող գրունտային ճանապարհների կառուցման ֆինանսավորման հայտը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մերժելու հանգամանքով: 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով միջոցառման իրականացման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Նշված աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026թ.:		
62.	Երկաթուղային տրանսպորտով երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	62.1 Ուղևորատար և բեռնատար շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում **/2021- 2026թթ. Կոնցեսիոն պայմանագրի գործունեության ընթացքում/**	2024թ-ի ընթացքում իրականացվել է 7 կմ երկաթուղային գծի նորոգում, վերանորոգվել է 4 միավոր լոկոմոտիվ՝ 32 միավոր գծային սարքավորումների փոխարինմամբ, հիմնանորոգվել է 2 կմ հպակային ցանց, փոխարինվել է 255 հենասյուն, հիմնանորոգվել է ուղևորների նստեցման 2 հարթակ: Ընդհանուր առմամբ փոխարինվել են 13887 կոճեր, որից՝ 3000-ը փայտյա, իսկ 10887-ը՝ երկաթբետոնյա: 2024 թվականին փոխադրվել են 563600 ուղևոր, որը 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 4,7%-ով:	Մինչև 2024թ. ավարտը 39 մլրդ ՀՀ դրամ ներդրումային պարտավորությունների չկատարումը պայմանավորված է «Գեոպրոմայնինգ գրուպ» ընկերության կողմից երկաթուղային տրանսպորտով ոսկու հանքանյութի տեղափոխման և այլ ընկերություններից խտանյութի բեռնման ծավալների զգալի կրճատմամբ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ նախատեսված 310 միավոր բեռնատար կիսավագոնների գնման փոխարեն ձեռք են բերվել թվով 110	

			2024թ-ին կոնտեյներներով առաքվել է 403,3 հազ. տոննա բեռ, որը 2023թ-ի համեմատությամբ աճել է 1,1%-ով: 2024թ-ի ընթացքում տեղափոխվել են 1441,3 հազ. տոննա բեռներ, որը 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 31,5%-ով: Ամբողջությամբ վերականգնվել է 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների արդյունքում Դեբեդ և Աղստև գետերի վարարման հետևանքով Ալավերդի-Այրում երկաթուղային հատվածում առաջացած փլուզումները՝ 8 հատվածներում՝ մոտ 2 կիլոմետր ընդհանուր երկայնքով:	կիսավագոններ, իսկ մանացածի գնումը, տեխնոլոգիական պրոցեսներում ներգրավվածություն չունենալու պատճառով, ճանաչվել է ոչ նպատակահարմար: Նախատեսված երեք ԷՊՀԴ ուղևորատար էլեկտրագնացքներից մեկի պակաս ձեռքբերումը պայմանավորված է ՀԿԵ ՓԲԸ-ի համար ստեղծված ֆինանսական ծանր հետևանքներով: Ներկայումս ընթանում են ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման նոր մեխանիզմի ընտրության աշխատանքները, որը կենթադրի գործող շարժակազմի արդիականացում:	
63.	Երկաթուղային ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման վերանայում	63.2 Մշակված մեխանիզմի ընտրություն և Կոնցեսիոն պայմանագրում փոփոխությունների կատարում **/2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**	Կոնցեսիոն պայմանագրում համապատասխան փոփոխությունների կատարում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակվել է «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման նոր մեխանիզմ, որով նախատեսվում է վնասների մինչև 100% փոխհատուցում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված (KPI) ապահովմամբ: Առաջարկված	

				արդյունավետության ցուցանիշների չկատարումը նախատեսում է սուբսիդավորման չափի նվազեցում, իսկ որոշ չափի չկատարումը նաև հաշվետու տարվա համար սուբսիդիայի չտրամադրում։ Մշակված նոր մեխանիզմը ներկայացվել է ռուսական կողմին, որի վերաբերյալ նախատեսվում են մի շարք քննարկումներ։ Ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման հարցը փոխվարչապետների կողմից քննարկվել է ս.թ. դեկտեմբերի 19-20-ին ք.Մոսկվայում կայացած Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական 23-րդ նիստի շրջանակներում։ Համաձայն ձեռքբերված պայմանավորվածությունների ներկայումս շարունակվում են սուբսիդավորման նոր մեխանիզմի ընտրության երկկողմ աշխատանքները։	
64.	Առևտրային ծովագնացության հնարավորությունների զարգացում	64.1 Առևտրային ծովագնացության մասին օրենքի նախագծին հավանություն տալու մասին կառավարության որոշման ընդունում	Առևտրային ծովագնացության զարգացում և բեռնաշրջանառության ավելացում	Մշակվել և շրջանառվել էր «Առևտրային ծովագնացության» օրենսգրքի նախագծի փաթեթը, որը ներառվել էր 2024թ. սեպտեմբերի 16-ին կայացած Տարածքային զարգացման և	

		/2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ/		շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստի օրակարգի հարցերում: Նիստի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից արվել էին դիտարկումներ, որի հիման վրա փաթեթը ուղարկվել էր ՀՀ արդարադատության նախարարություն՝ Եվրոպական միության օրենսդրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով: 23.12.2024թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացվել է փորձագիտական եզրակացությունը: Արված դիտարկումների հիման վրա Փաթեթը լրամշակվում է և սահմանված կարգով կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:	
65	«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից ներկայացվող 5-ամյա Մաստեր պլանի հաստատման գործընթացի ապահովում, Մաստեր պլանի իրագործում,Կոնցեսիայի պայմանագրին կից ակտիվների ցանկերի ճշգրտում	65.1-65.2 Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայանի և ենթակառուցվածքների բարեկարգմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ **/2021- 2026թթ./**	**«Զվարթնոց» օդանավակայան** 1.Ուղևորային համալիրի նստեցման հատվածի ընդլայնման և սանհանգույցների ավելացման աշխատանքները մեկնարկել են, 2. Իրականացվում են բիզնես սրահի վերանորոգման աշխատանքներ, 3. Աերոդրոմի «Ա» և մայրուղային ղեկուղիների վերանորոգման աշխատանքները մեկնարկել է և շարունակվում է, 4. Կառոցվել է անվճար ավտոկայանատեղի,		

			5. Աշխատակիցների համար նախատեսված գործող ավտոկայանատեղին ընդլայնվել է և արդիականացվել, 6. Ձեռք են բերվել Նոր սարքավորումներ։ **«Շիրակ» օդանավակայան** 1. Կառուցվել է նոր մեկնման սրահ, 2. Վերանորոգվել է ուղևորային համալիրը, 3. Տեղադրվել է նոր ցանկապատ։		
66	Դեպի Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետությունից չվերթերի աշխարհագրության ընդլայնում և մատչելի ավիափոխադրումների ապահովում	66.1 Ավիաընկերությունների թվի ավելացմանն ուղղված միջոցառումներին աջակցություն **/2021- 2026թթ./**	2024 թվականի ընթացքում ՀՀ ավիացիոն շուկա են մուտք գործել 5 նոր ավիաընկերություններ։		
67	Ավիացիոն շուկայի ազատականացում ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ	67.1 «ՀՀ և ԵՄ և ԵՄ անդամպետությունների միջև ընդհանուր Ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրման գործընթացի կազմակերպում **/2021- 2026թթ./**	«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրերի նախագծերի մշակում։		

68	Թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացում՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերին, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի դրույթներին և, առավել	68.1 Ավիացիայի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում **/2022 թ. հուլիսի 3- րդ տասնօրյակ/**	«Ավիացիայի մասին» օրենքում և դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների կատարում, ինչպես նաև նոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունում:		
		68.2 Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից «Ավիացիայի մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորության հստակեցում **/2021 թ. դեկտեմբեր ի 1-ին տասնօրյակ/**			

		68.5 Կոմիտեի մասնագետների անհրաժեշտ որակավորումների բարձրացում՝ տեսական և գործնական դասընթացների միջոցով **/2021- 2026թթ./**	Թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերին, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի դրույթներին և, առավել հնարավոր չափով, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության, և ավիացիայի ոլորտին առնչվող այլ միջազգային կազմակերպություններ ի կողմից հրապարակված միջազգային ստանդարտներին, առաջարկվող գործելաձևերին ու ընթացակարգերին համապատասխանության ապահովման համար Կոմիտեի կողմից 2024 թվականի ընթացքում կազմակերպվել է 63 դասընթաց, որին ապահովվել է 217 մասնակցություն (աշխատողների մի մասը մասնակցում է մեկից ավել դասընթացի):		
74	Կառավարությունը «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնակցությամբ բանակցություններ է վարելու աշխարհում առաջատար ավիաընկերությունների հետ՝ դեպի	74.2 Պայմանավորվածություն ձեռք բերել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ՝ դեպի ԱՄՆ ուղիղ չվերթերի ապահովման աշխատանքների իրականացման և համապատասխան թույլտվություններ ստանալու նպատակով	2024 թվականի ապրիլի 1-ից 5-ը ԱՄՆ Տրանսպորտի անվտանգության ադմինիստրացիայի (TSA) մասնագետների կողմից Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում անցկացվել է աուդիտ, որի արդյունքում ներկայացված առաջարկությունների հիման վրա կատարվել են հետևյալ աշխատանքները՝		

	Հայաստան և Հայաստանից ավիափոխադրումներ իրականացնելու համար: Միաժամանակ բանակցություններ ենք վարելու հայաստանյան ավիաընկերությունների հետ՝ վերջիններիս գործունեության համար նպաստավոր միջավայր և պայմաններ ստեղծելու, ինչպես նաև մրցունակության բարձրացման ուղղությամբ:	**/2025թ. դեկտեմբեր ի 3-րդ տասնօրյակ/**	1. Մշակվել և շահագրգիռ մարմիններին է ներկայացվել ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի մասին» ՀՀ կառավարության 02.10.2003թ. N1307-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, 2. Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 27.05.2004թ. N 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է հաստատման ՀՀ կառավարություն 3. «ՀՀ օդանավակայաններում անցագրային և ներօբյեկտային վերահսկողության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1.07.2005թ.N 1142-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է հաստատման ՀՀ կառավարություն, 4. Մշակվել և ՀՀ ՏԿԵ նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անտվանգության		

			ուսումնական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի նախագիծը, 5. Մշակվել և ՀՀ ՏԿԵ նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության համակարգի փորձարկումների իրականացման կարգը» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի նախագիծը, 6. Մշակվել և ՀՀ ՏԿԵ նախարարի 20.12.2024թ. թիվ 20-Ն հրամանով հաստատվել է «Ավիացիոն անվտանգության ծառայությունների զննման օպերատորների, հրահանգիչների և որակի հսկողության տեսուչների սերտիֆիկացման կարգը» 7. Մշակվել և ՀՀ ՏԿԵ նախարարի 02.12.2024թ. թիվ 15-Ն հրամանով հաստատվել «Պայթյունի սպառնալիքի մասին հեռախոսով ստացված հաղորդագրության դեպքում պատասխանատու անձանց գործողությունների կարգը» 7. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ավիացիոն անվտանգության վարչության երկու մասնագետներ 2024 թվականի ընթացքում մասնակցել		

			են ԵԿԱԿ-ի կողմից CASE II ծրագրի շրջանակներում «Ավիացիոն անվտանգության գաղտնի փորձարկումներ» թեմայով դասընթացին և ստացել են համապատասխան սերտիֆիկատներ:		
75	Կառավարությունը միջոցներ է ձեռնարկելու ուժեղացնել ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման լիազորված մարմնի ինստիտուցիոնալ կարողությունները, որը կիրականացնի պատահարների և լուրջ միջադեպերի՝ միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական քննություն և կլինի անկախ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից:	75.1 Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից լիովին անկախ, որակյալ մասնագետներից կազմված ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության մարմնի՝ միջազգային ստանդարտներին համապատասխան գործառույթների պատշաճ իրականացում: Նախատեսված է միջազգային քաղաքացիական ավիացիայի կոնվենցիայի 13-րդ հավելվածով **/2022թ. մարտի 3- րդ տասնօրյակ/**	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 10-ի N 29-Ա հրամանով հաստատվել է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնադրությունը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2024 թվականի հունվարի 15 N 02-Լ հրամանով հաստատվել է Բաժնի պետի և գլխավոր մասնագետների պաշտոնի անձնագրերը: Միջազգային ստանդարտներին, մասնավորապես միջազգային քաղաքացիական ավիացիայի կոնվենցիայի 13-րդ հավելվածին և «Քաղաքացիական ավիացիայում պատահարների և միջադեպերի քննության և կանխարգելման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 996/2010 (ԵՄ) կանոնակարգին համապատասխան գործառույթների պատշաճ իրականացման նպատակով 2024 թվականին մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն		Համաձայն միջազգային ստանդարտների՝ Բաժնի աշխատակիցների վերապատրաստումների մասնակցությունը կրում է շարունակական բնույթ:

			պատահարների և միջադեպերի քննության անցկացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի N 1777-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և վերջինիս ընդունման հիմնավորումը ներկայացվել է շահագրգիռ կողմներին դիրքորոշում ստանալու նպատակով: Միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական քննություն անցկացնելու նպատակով կազմվել է Միջպետական ավիացիոն կոմիտեի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև ավիացիոն պատահարների քննության և կանխարգելման հետ կապված համագործակցության վերաբերյալ համաձայնագրի հայերեն և ռուսերեն տեքստերը, հիմնավորումը, համապատասխան մարմիններից ստացված եզրակացությունների ամփոփաթերթը և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ համաձայնեցման նպատակով: Բաժնի հզորացման նպատակով միջոցներ են ձեռնարկվել՝ միանալու «Քաղաքացիական ավիացիայի եվրոպական կոնֆերանսի քաղաքացիական ավիացիայի ոլորտում պատահարների/միջադեպերի		

			քննության համագործակցության վերաբերյալ վարքագծի կանոնների» մասին փաստաթղթին: Բաժնի գործառույթները պատշաճ իրականացնելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու նպատակով՝ Բաժնի աշխատակիցները մասնակցել են 11 մասնագիտական վերապատրաստումների: Վերապատրաստումներին մասնակցությունը կրում է շարունակական բնույթ:		
77	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում	77.1 Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործող վարձակալության պայմանագրով նախատեսված վարձատուի ու վարձակալի իրավունքների և պարտավորությունների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում **/2021-2026 թվականներ/**	Բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները շարունակական բարելավվել են: Վարձակալության պայմանագրով սահմանված հիմնական կատարողական ցուցանիշների (ջրամատակարարման շարունակականություն, ջրի որակ, չհաշվառված ջուր, բաժանորդների բավարարվածություն և այլն, նորմալ գործող ստանդարտներ), ինչպես նաև պայմանագրի այլ պահանջների ապահովման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը. Երևան քաղաքում կազմում է 23 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 20,5 ժամ/օր, իսկ գյուղական		

			տարածքներում՝ 20,2 ժամ/օր։ Ջրի որակը կազմում է 98.5% է, ջրաչափությունը կազմում է 99.8%։ 2024 թվականին գանձվել է շուրջ 31,07 մլրդ դրամ 2023 թվականի համեմատ ավել է գանձվել 1,3 մլրդ. դրամ, գանձման տոկոսը կազմել է 95.13%, 2023 թվականի համեմատ առաջընթացը կազմում է 0,13%, իսկ բազիսային տարվա համեմատ աճել է 9,6%։		
		77.2 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարմանն ուղղված բարեփոխումների (այդ թվում ինստիտուցիոնալ) իրականացում՝ այն ներառելով պետական լիազոր մարմնի գործառույթում **/2021-2026 թվականներ/**	Ջրային կոմիտեի կողմից մշակվել է Ջրվեժ և Ձորաղբյուր բնակավայրերի խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման հանրային ներդրումային նախագիծը՝ Հանրային ներդրումային կոմիտեի քննարկմանը ներկայացնելու համար։ Նախագիծը ներկայումս գտնվում է աշխատանքային քննարկման փուլում։		
		77.3 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացում՝ ծառայությունների	Ներդրումների իրականացման արդյունքում Վարձակալի կողմից չսպասարկվող ՀՀ մարզերի մի շարք բնակավայրերից ստացված սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերն ու տեխնիկական բնութագրերն ուսումնասիրվել են Ջրային կոմիտեում և նախագծերի վերաբերյալ ներկայացվել են		

		պատշաճ մակարդակի ապահովման համար **/2021-2026 թվականներ/**	համապատասխան դիրքորոշումներ: Սպասարկվող բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերի հայտերը փոխանցվում են Վարձակալին՝ մասնագիտական դիրքորոշման ներկայացման նպատակով:		
		77.4 «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար սահմանված կարգով լիցենզիայի տրամադրում և այդ բնագավառում գործունեության վերսկսման անհրաժեշտ պայմանների ստեղծում **/2022 թվականի դեկտեմբեր ի 2-րդ տասնօրյակ/**		ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունները «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպելու մասին» N 1399-Ա որոշման 2-րդ կետի հանձնարարականի կատարումն ապահովելու, մասնավորապես՝ ընկերությունների վերակազմակերպման և միացման պետական գրանցումն իրականացնելու պահանջը դեռևս չի կատարվել, քանի որ պարզվել է, որ «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սեփական կապիտալը (-1,819,911.0 հազար դրամ) կազմել է բացասական թիվ: Հետագայում Ընկերություններն ուսումնասիրություններ են իրականացրել, որի արդյունքներով հայտնաբերվել է հաշվապահական սխալ: Համաձայն Ընկերության կողմից ներկայացված	

				տեղեկատվության, վերոհիշյալ հաշվապահական սխալի ձևակերպման և սխալի ուղղման արդյունքներով «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սեփական կապիտալը կկազմի դրական մեծություն, ինչն իրավական առումով հնարավորություն կտա սկսել Ընկերությունների վերակազմավորման գործընթացը։ Ընկերությունների վերակազմավորման համար անհրաժեշտ ծախսերի, կանոնադրական կապիտալի նվազեցման գրանցման ծախսերի, դեպոզիտարիայում գրանցման ծախսերի և այլ ծախսերի համար անհրաժեշտ է շուրջ 256.0 մլն դրամ, որը ներկայումս ընկերությունները, ելնելով ֆինանսական վիճակից, ի վիճակի չեն իրականացնելու։	
		77.5 Ջրի որակը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ բնակավայրերում խմելու ջրի որակի մշտական մոնիթորինգի իրականացման գործուն մեխանիզմի սահմանում **/2021-2026 թվականներ/**	Համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի՝ ընկերության սպասարկման տարածքում բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բարելավման գործընթացը շարունակական է։ Վարձակալության պայմանագրով սահմանված են հիմնական կատարողական ցուցանիշներ՝ ջրամատակարարման շարունակականություն,		

			մատակարարվող ջրի որակ, չհաշվառված ջուրը և բաժանորդների բավարարվածություն: Ընկերության սպասարկման տարածքում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» սանիտարական կանոնները և նորմերը՝ N2-III-Ա2-1» N876 հրամանով հաստատված գործող նորմերին համապատասխան: «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության սպասարկման տարածքում 2024 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ մատակարարվող խմելու ջրի որակը կազմում է 98. 5%:		
		77.6 «Աէրացիա» կեղտաջրերի նոր մաքրման կայանի (ԿՄԿ) շինարարության կապալի միջազգային պայմանագրի ավարտի ապահովում, գույքի ձևավորումից հետո կայանի գործարկում և շահագործման հանձնում, ԿՄԿ-ի վերակառուցման ծրագրի հետագա փուլերի համար	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին որոշակի իրավասություններ վերապահելու և «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման ծրագրի պայմանագիրն ավարտելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված ընթացակարգով շրջանառվել և		

		նախապատրաստական աշխատանքների իրականացում **/2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**	ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, նախագիծը բազմաթիվ անգամ քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստերում և առաջարկությունների արդյունքում լրամշակվել է։ Նախագծի վերադարձման հիմնական բարդույթը կայանում է նրանում, որ Վարչապետի աշխատակազմի կողմից՝ ներկայացված եզրակացությամբ՝ բացակայում է համապատասխան լիազորող նորմը: 2023թ. հունվարին ՀՀ փոխվարչապետ Տ.Խաչատրյանի մոտ տեղի է ունեցել քննարկում, որի արդյունքներով հանձնարարվել է «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման ծրագրի պայմանագիրն ավարտելու, ինչպես նաև «Նոր Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի հետագա գործարկման և շահագործման գործընթացների կազմակերպումը իրականացնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով, ինչի արդյունքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը մշակել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը շրջանառվել է Ջրային կոմիտեի կողմից, սակայն հետագա ընթացքի վերաբերյալ հիմնական վեկտորները դեռևս հստակեցված չեն։		

			Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարություն 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N1579-Ն որոշմամբ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 16,986.0 հազ. դրամ գումար «Աէրացիա մաքրման կայանի» պահնորդական ծառայություններ ձեռք բերելու համար։ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 18-ին կնքվել է N ՀՏԶՀ-ԱՄԿ-ԾԶԲ-2024/1 պայմանագիր, որով «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն իրականացնում է ՀՀ Երևան քաղաքի Շիրակի փողոցի 94շ. հասցեում գտնվող «Աէրացիա մաքրման կայանի» պահնորդական ծառայությունները։		
		77.7 Սևանա լճի ավազանի քաղաքային 3 բնակավայրերում գործող ԿՄԿ-ներից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրման ապահովման, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կոյուղացման և տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների և սարքավորումների տեղադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում	2023թ-ի հոկտեմբերի 14-ին ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի միջև կնքված համաձայնագրով (Տեխնիկական աջակցության համաձայնագիր) Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվում է «Լուծումներ, որոնք նպաստում են Սևանա լճի բնապահպանական կայունությանը և աղետներին դիմակայունությանը» ծրագիրը։ Տեխնիկական առաջադրանքի հիմնական նպատակն է կարողությունների զարգացումը և գիտելիքների փոխանակումը կլիմայապես կայուն և ածխածնի ցածր արտանետմամբ		

		/2024-2026 թվականներ/	զարգացման պլանավորման վերաբերյալ, ինչպես նաև կլիմայական ներդրումների առաջնահերթությունների բացահայտումը՝ Սևանա լճի տնտեսական ներուժը զարգացնելու համար՝ միաժամանակ պաշտպանելով նրա էկոհամակարգը կլիմայական և բնապահպանական սթրեսներից: Ծրագրի շրջանակներում առանձին բաղադրիչով նախատեսվում է իրականացնել Սևանա լճի ափին գտնվող Գավառ, Մարտունի ու Վարդենիս համայնքներում գործող թվով 3 մաքրման կայաններում կեղտաջրերի մաքրման կայանների արդիականացման տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:		
		77.9. Կոյուղու ցանցին չմիացած տնտեսավարողների օբյեկտներում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման և սպասարկման մասնագիտացված կառույցների ստեղծում **/2024-2026 թվականներ/**	Ներկայումս Ասիական Զարգացման Բանկի կողմից ներկայացվել են առաջարկություններ, որոնք կնպաստեն Սևանա լճի բնապահպանական կայունության և աղետների դիմակայունության խնդիրների լուծմանը, ինչի վերաբերյալ ներկայացվել են հաշվետվություններ: Հաշվետվությունների մեջ անդրադարձ է կատարվել նաև Սևանա լճի ավազան թափվող կեղտաջրերի մաքրման խնդիրներին, կեղտաջրերի մաքրման ապակենտրոնացված լուծումներին, ինստիտուցիոնալ խնդիրներին:		

		77.10 «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն **/2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**	Որոշման նախագծում ներառված դրույթները նախատեսվում է ներառել ներկայումս մշակվող ջրային ոլորտի ռազմավարության մշակման մեջ։ ՀՀ վարչապետի 22.07.2024 թվականի N690-Ա որոշմամբ հաստատվել են ջրային ոլորտի ռազմավարության մշակման, ոլորտում արձանագրված խնդիրների և դրանցից բխող գործողությունների ծրագիր մշակելու նպատակով միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմը և ջրային ոլորտում արձանագրված նախնական օրակարգային հարցերը։ Սույն թվականի սեպտեմբերի 20-ին տեղի է ունեցել միջգերատեսչական աշխատանքային խմբի անդրանիկ նիստը։ Քննարկված հարցերի և տրված հանձնարականների ուղղությամբ կատարվում են աշխատանքներ։ Սույն թվականի նոյեմբերի 15-ին կայացել է միջգերատեսչական աշխատանքային խմբի 2-րդ նիստը։ Նիստի օրակարգով սահմանված քննարկվել են ոռոգման և խմելու ջրի ոլորտին առնչվող աշխատանքները՝ մասնավորապես փոքր և միջին ջրամբարաշինության ծրագրի շրջանակներում 15 ջրամբարների ընթացիկ վիճակի, Կապսի և Վեդու ջրամբարների շինարարական աշխատանքների ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև «Վեոլիա		

			Ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի շրջանակներում նախատեսվող համաձայնագրի առարկա կետերի վերաբերյալ: Նիստերում քննարկված հարցերի, միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված դիտարկումների, առաջարկությունների և տրված հանձնարականների ուղղությամբ ներկայումս կատարվում են աշխատանքեր:		
		77.11 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների իրականացում **/2023թ. դեկտեմբեր ի 2-րդ տասնօրյակ/**	ՀՀ կառավարության 01.06.2023թ. N 877-Ա որոշման հիման վրա «ՀԵԾ-II, փուլ-3» ծրագրի ԼՈՏ-1, ԼՈՏ-2, ԼՈՏ-3 բաղադրիչների պայմանագրային ժամկետները երկարաձգվել են մինչև 31.05.2024թ: ՀՀ կառավարության 30.05.2024թ. N 820-Ա որոշման հիման վրա ԼՈՏ-3 բաղադրիչի պայմանագրային ժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2024թ., իսկ ԼՈՏ-1, ԼՈՏ-2 բաղադրիչների պայմանագրային ժամկետները երկարաձգվել են մինչև 30.11.2024թ.: ԼՈՏ-2 բաղադրիչը գտնվում է թերությունների վերացման փուլում, ԼՈՏ-1 և ԼՈՏ-3 բաղադրիչների համար նախատեսվում է ժամկետի երկարացում: Ծրագրով ընդհանուր առմամբ նախատեսված է իրականացնել հետևյալ աշխատանքները. ջրատարի կառուցում -63,6 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում -504,7 կմ, տնային	ԼՈՏ-1 ծրագրով աշխատանքները կշարունակվեն Գյումրի համայնքում՝ կապված համայնքի և «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից առաջարկվող նախագծային փոփոխությունների և լրացուցիչ աշխատանքների հետ: Լոտ-3 ծրագրով աշխատանքները կշարունակվեն Սիսիան համայքում՝ կապված համայնքի և «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից առաջարկվող նախագծային փոփոխությունների, լրացուցիչ աշխատանքների հողհատկացումների և էլեկտրամատակարարման տեխպայմանների ձեռք բերման հետ, ինչպես նաև Վարդենիս համայնքում և Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրում՝	

			մուտքագծերի կառուցում -185,5 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 17714 հատ, կոյուղագծերի կառուցում – 31,3 կմ։ 25.12.2024թ. դրությամբ իրականացվել են. ջրատարի կառուցում -64,0 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում -507,1 կմ, տնային մուտքագծերի կառուցում -196,3 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 13775 հատ, կոյուղագծերի կառուցում – 29,5 կմ։ Այդ թվում 2024թ. ընթացքում իրականացվել են. ջրատարի կառուցում -9,1 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում -55,4 կմ, տնային մուտքագծերի կառուցում -81,8 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 10035 հատ, կոյուղագծերի կառուցում – 5,8 կմ։	կապված բնակչության կողմից աշխատանքները խոչընդոտելու, էլեկտրամատակարարման տեխպայմանների ձեռք բերման և հողհատկացումների հետ։	
		77.12 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում և շահագործման ապահովում **/2023 թվականի դեկտեմբեր ի 2-րդ տասնօրյակ/**	«ՀԵԾ-II, փուլ-3» ծրագրի ԼՈՏ-4 բաղադրիչով նախատեսվում է ՀՀ 4 մարզերի (Լոռու, Արմավիրի,Կոտայքի և Սյունիքի մարզերի) 5 համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման (ՋՋ) համակարգերի վերակառուցման աշխատանքներ (Ագարակ, Ուռուտ, Խնածախ, Մարգարա(ոչ պարտադիր))՝ ներառյալ կեղտաջրերի մաքրման կայանների (ԿՄԿ) կառուցում, և 1 համայնքի միայն ջրամատակարարման	Ուշացումները պայմանավորված են այն հանգամանքով, որ վերոնշյալ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումը ստանձնելու վերաբերյալ համաձայնեցումը «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից տրամադրվել է 2024թ. օգոստոսին։	

			համակարգի վերակառուցում (Արզական)։ Ջրամատակարարման և ջրահեռացման (ՋՋ) համակարգերի վերակառուցման համար հայտարարվել են երկու մրցույթներ (ԼՈՏ-4Ա/1 (Ագարակ, Ուռուտ համայնքներ), ԼՈՏ-4Ա/2 (Արզական, Խնածախ, Մարգարա(ոչ պարտադիր) համայնքներ)։ Ֆինանսական առաջարկները հաստատվել են KFW Բանկի կողմից, գործընթացը գտնվում է կապալառուների հետ պայմանագրերի կնքման բանակցային փուլում։ Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2025 թվականի 2-րդ եռամսյակի սկզբին, իսկ ավարտը՝ 2026թ. տարեվերջին։ Կեղտաջրերի մաքրման կայանների (ԿՄԿ) կառուցման համար հայտարարվել է առանձին մրցույթ, որի գնահատման զեկույցը ներկայացվել է KFW Բանկի հաստատմանը։ Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2026 թվականի 1-ին եռամսյակում, իսկ ավարտը՝ 2027թ. տարեվերջին։		
		77.13 Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում **/2022 թվականի դեկտեմբեր ի 2-րդ տասնօրյակ/**	Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (ԵՋԲԾ) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ), Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ) և Եվրամիության հարևանության ներդրումային ծրագիր (ԵՄ ՀՆԾ)		

			Ծրագրի իրականացման ժամկետը նախատեսված է եղել 2015–2019թթ.: Ծրագրի սկզբնական փուլում այն իրականացվել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից, սակայն ՀՀ կառավարության 28.02.2017թ. № 191-Ա որոշմամբ ծրագրի իրականացման գործառույթները փոխանցվել են ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին: Այնուհետև ՀՀ կառավարության 28.02.2019թ. № 170-Ն որոշմամբ ծրագրի իրականացման գործառույթները փոխանցվել են ՀՏՋՀ-ին, որոնք որոշակի ազդեցություն են ունեցել Ծրագրի իրականացման ժամկետների վրա: Ծրագրի շրջանակներում առաջացած խնայողությունների հաշվին նախատեսվել է իրականացնել նաև Արարատյան պոմպակայանում 3 պոմպերի փոխարինման, Բալահովիտ բնակավայրի, Փիրումյան /Փաթեթ 6/, Նոր Խարբերդ և հարակից թաղամասերի /Փաթեթ 7/ ջրամատակարարման բաշխիչ ցանցերի վերակառուցման և անհատական տնային միացումների փոխարինման աշխատանքները: Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում 2016 թվականին սկսված և անավարտ մնացած /Փաթեթներ 1, 2, 3/, ծրագրով նախատեսված /Փաթեթներ 4 և 5/, խնայողությունների հաշվին		

			նախատեսված /Փաթեթներ 6 և 7/ աշխատանքներն ավատին հասցնելու համար ՀՀ կառավարության և Եվրոպական Միության միջև կնքված գործող ֆինանսական համաձայնագրի համաձայն ֆինանսավորման գործարքների իրականացման փուլի սահմանված ժամկետը երկարաձգվել է մինչև 04.01.2025 թ. և փակման սահմանված ժամկետը մինչև 04.01.2026 թ., իսկ ՀՀ կառավարության և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև կնքված գործող ֆինանսական պայմանագրի համաձայն վարկային միջոցների հասանելիության սահմանված ժամկետը երկարաձգվել է մինչև 31.12.2024 թ. և աշխատանքների իրականացման սահմանված ժամկետը մինչև 31.12.2025 թ.: Ծրագրով ընդհանուր առմամբ նախատեսված է իրականացնել 202.0 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնման, 134.2 կմ երկարությամբ անհատական տնային միացումների խողովակաշարերի փոխարինման, 18,245 բաժանորդների ջրաչափական հանգույցների տեղադրման և 30 հատ բակային պոմպակայանների վերակառուցման աշխատանքներ։ 30.12.2024թ. դրությամբ իրականացվել են. • 186.5 կմ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնման,		

			• 111.48 կմ անհատական տնային միացումների խողովակաշարերի փոխարինման, • 16,919 բաժանորդների ջրաչափական հանգույցների տեղադրման, • 30 հատ բակային պոմպակայանների վերակառուցման և • Արարատյան պոմպակայանում 3 նոր պոմպերի փոխարինման աշխատանքները։ 30.12.2024-2025թթ. Պլանավորվում է իրականացնել շուրջ 15.5 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնման, 22,72 կմ երկարությամբ անհատական տնային միացումների խողովակաշարերի փոխարինման և 1,326 բաժանորդների ջրաչափական հանգույցների տեղադրման աշխատանքներ։		

78	Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ	78.1 «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և իրականացում **/2022-2023 թվականներ/**	«Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակումը համահունչ է ՀՀ վարչապետի 22.07.2024 թվականի N690-Ա որոշմամբ Ջրային ոլորտի ռազմավարության մշակման, ոլորտում արձանագրված խնդիրների և դրանցից բխող գործողությունների ծրագիր մշակելու նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի ջրային ոլորտում արձանագրված խնդիրների նախնական օրակարգային հարցերին և ոռոգման ոլորտի մասով կարևոր հիմք կհանդիսանա ներկայումս մշակվող Ջրային ոլորտի ռազմավարության համար: Տեղեկացնում ենք, որ սույն թվականի սեպտեմբերի 20-ին տեղի է ունեցել միջգերատեսչական աշխատանքային խմբի անդրանիկ նիստը: Քննարկված հարցերի և տրված հանձնարարականների ուղղությամբ կատարվում են աշխատանքներ: Սույն թվականի նոյեմբերի 15-ին կայացել է միջգերատեսչական աշխատանքային խմբի 2-րդ նիստը: Նիստի օրակարգով սահմանված քննարկվել են ոռոգման և խմելու ջրի ոլորտին առնչվող աշխատանքները՝ մասնավորապես փոքր և միջին ջրամբարաշինության ծրագրի շրջանակներում 15 ջրամբարների ընթացիկ վիճակի,		

			Կապսի և Վեդու ջրամբարների շինարարական աշխատանքների ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի շրջանակներում նախատեսվող համաձայնագրի առարկա կետերի վերաբերյալ: Նիստերում քննարկված հարցերի, միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված դիտարկումների, առաջարկությունների և տրված հանձնարարականների ուղղությամբ կատարվելիք աշխատանքների վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմ կներկայացվի տեղեկատվություն: Համաձայն ընթացիկ տարվա զարգացումների և քննարկումների, խնդրո առարկա ռազմավարության մշակումը հավանաբար կդիտարկվի Ջրային ոլորտի մեկ միասնական ռազմավարության մշակման համատեքստում, որի ուղղությամբ վերլուծական և նախապատրաստական աշխատանքները համակարգվում են միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից՝ ներգրավված գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ և միջազգային փորձագիտական ռեսուրսների ներգրավմամբ (այդ ուղղություններով նախատեսված միջոցառումներ կան ինչպես ՀԲ		

			WISE ծրագրով, այնպես էլ ԶՖԳ IADAAM ծրագրով):		
79	Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում	79.2.Տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում **/2023-2025 թվականներ/**	ՄԱԿ-ի ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող «Անցում» ցածրածխածնային ոռոգման տեխնոլոգիաների Լոռու և Շիրակի մարզերում բարձրացված արտադրողականության, պարենային անվտանգության և բարելավված կենսապահովման համար ծրագրի շրջանակներում ստեղծվել է Էլ.հարթակ համապատասխան սերվերային համակարգի վրա, որը կգործարկվի 2025 թվականին և կապահովի ջրօգտագործողների ընկերությունների և «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրառի կետերում և ոռոգման համակարգերի մայր և		

			երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում տեղադրված ջրաչափական սարքավորումների տվյալների օնլայն դիտման հնարավորությունը:		
80	Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատում և բարելավում	80.1.Իրականացնել համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով մշակել և իրականացնել կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ **/2022-2026 թվականներ/**	Համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ մտցնելու մասով անհրաժեշտ է ընտրել խորհրդատու, որը կիրականացնի գույքագրման չափագրման և քարտեզագրման աշխատանքներ: Առաջարկվել է Համաշխարհային բանկին առաջարկվել է այդ ծրագրի իրականացումը ներառելու առաջիկա ծրագրում:		
		80.2.Իրականացնել ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումներ և ներդրումային քաղաքականություն **/2022-2026 թվականներ/**	ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին նախատեսված 21 նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման մրցութային գործընթացների փոխարեն իրականացվել է 28 հրատապ լուծում պահանջող աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման մրցութային գործընթացներ, որոնց արդյունքում արդեն իսկ պատրաստ		

			են թվով 26 նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները՝ ներառյալ փորձաքննության դրական եզրակացությունները, ևս 2-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները պատրաստ կլինեն 2025 թվականի 1-ին եռամսյակում։ Ներկայացված 26 աշխատանքներից 8-ի, ինչպես նաև նախորդ տարիներին չկայացած շինարարական մրցույթների արդյունքում դեռևս չկատարված 1 աշխատանքի մասով կազմակերպվել է շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռք բերման մրցույթներ, որի արդյունքում արդեն իսկ առկա են 9 հիմնանորոգման աշխատանքների մասով կապալառուների, շինարարության որակի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը և աշխատանքները մեկնարկել են։ Եվս 6 աշխատանքներ գտնվում են մրցութային փուլում և աշխատանքները կմեկնարկեն 2025 թվականի առաջին եռամսյակում։ 2024թ մեկնարկել է Թալին 1 պ/կ շինարարական աշխատանքները, որոնք կավարտվեն 2025 թվականի 3-րդ եռամսյակի վերջում։		

81	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր	81.1.Իրականացնել ոռոգման համակարգերի բարելավում՝ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում **/2022-2023 թվականներ շարունակական/**	Միջոցառումն իրականացվում է «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում՝ Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ: Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները մեկնարկել են 2018 թվականին և իրականացվել սահմանված ժամկետներում: 2024 թվականին ավարտվել են միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման աշխատանքները, բացառությամբ միջտնտեսային մեկ ջրանցքի, որի վերականգնման աշխատանքների ավարտը նախատեսվում է 2025 թվականի հունիսին: Հաշվետու ժամանակահատվածում (2024 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում) վերականգնվել են երկրորդ կարգի ջրանցքների 12.4 կմ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածներ:		
82	2021-2026 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում	82.1.«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1. Կապսի ջրամբարի կառուցում **/2021-2026 թվականներ (ծրագիրը մեկնարկել է 2017 թվականին և կավարտվի 2027 թվականին)/**	Շարունակվել են 2023 թվականին մեկնարկած Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները, մասնավորապես՝ իրականացվել են մոբիլիզացիոն, շինարարական ճամբարի և գետի ջրի հեռացման համակարգի կառուցման աշխատանքները: Զուգահեռաբար մշակվել են ոռոգման թունելի և ինյեկցիոն աշխատանքների իրականացման համար		

			անհրաժեշտ Մեթոդների մասին հայտարարագրերը:		
		82.2. «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2. ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում **/2021-2024 թվականներ/**	Փուլ 2-ի ֆինանսական միջոցները Կապսի պատվարի շինարարությանն ուղղելու նպատակով Վերակառուցման վարկերի բանկի (KFW) կողմից մշակված համաձայնագրի փոփոխության նախագիծ ստորագրվել է 2024թ. մայիս 2-ին և հաստատվել ՀՀ նախագահի հունիսի 25-ի ՆՀ-191-Ն հրամանագրով:		
		82.3.Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ **/2021-2025 թվականներ (ծրագիրը մեկնարկել է 2017 թվականին)/**	2024 թվականին հիմնական աշխատանքները ավարտվել են: Ընթացքի մեջ են SCADA համակարգի և էլեկտրամատակարարման կարգաբերման աշխատանքները: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի կառուցման ծրագրով իրականացվել է 62,332մ ջրագծի կառուցում: Ներտնտեսային ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները ավարտվել են 2024 դեկտեմբերի 31՝ համաձայն պայմանագրի:	Զգձգումները պայմանավորված են այն հանգամանքով, որ Կապալառուի կողմից եղել են ուշացումներ:	
83	Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ	83.1.Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2021-2026 թվականներ/**		ՀՀ Գեղարքունիքի մարզի Արգիճիի ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ժամանակավորապես դադարեցված են՝ ջրամբարի նախնական ընտրված	

	ջրի քանակի ապահովման հնարավորություններ ի ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն			տեղամասում առկա «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ին պատկանող ՀԷԿ-ի օրվա կարգավորման ջրամբարի առկայությամբ պայմանավորված, որի պատճառով անհնարինություն է առաջացել ջրամբարի նախատեսվող տարածքում իրականացնել համապատասխան հետազոտություններ:	
		83.2.Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2021-2026 թվականներ/**	Ավարտվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձորի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է Աստղաձորի ջրամբարի կառուցման դրական փորձաքննական եզրակացությունը: Հաջորդիվ նախատեսվում ՆՆՓ-ների պարզ փորձաքննության փուլը, որի համար արդեն մեկնարկել է ծառայությունների մատուցման գնման գործընթացը: Մշակման փուլում են գտնվում նաև ջրամբարի կառուցման շրջանակներում վերաբնակեցման գործողությունների պլանի (ՎԳՊ) պատրաստման և ՎԳՊ իրականացման խորհրդատվական ծառայությունները: ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 175-Ն որոշման		

			կարգի համաձայն՝ մշակվել է Աստղաձորի ջրամբարի կառուցման հանրային ներդրումային ծրագրերի նախագիծը՝ որը ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշմանը: Ներկայումս ծրագրային փաթեթը լրամշակման փուլում է:		
		83.3.Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	Ավարտվել են ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի (ՆՆՓ) պարզ փորձաքննության և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) փորձաքննության գործընթացները, ներկայացվել են դրական եզրակացություններ: Կազմվել է նաև ջրամբարի կառուցման վերաբնակեցման գործողությունների պլանը: Ջրամբարի ՆՆՓ-երի փաթեթը ներկայացվել է համալիր փորձաքննության: ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 175-Ն որոշման կարգի համաձայն՝ մշակվել են Ելփին ջրամբարի կառուցման հանրային ներդրումային ծրագրերի նախագիծը՝ որը ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշմանը: Ներկայումս ծրագրային փաթեթը լրամշակման փուլում է:		

		83.4.Վայոց ձորի Խնձորուտի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Խնձորուտի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.5.Վայոց ձորի Վերնաշենի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Վերնաշենի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.6.Վայոց ձորի Խաչիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Խաչիկի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.7. Վայոց ձորի մարզում Գետիկ վանքի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Գետիկ վանքի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.8. Վայոց ձորի մարզում Զիրակի ջրամբարի կառուցման նախագծային	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Զիրակի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը,		

		փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.9. Արմավիրի մարզի Քասախի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	Ավարտվել են ՀՀ Արմավիրի մարզի Քասախի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի (ՆՆՓ) պարզ փորձաքննության և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) փորձաքննության գործընթացները, ներկայացվել են դրական եզրակացություններ: Կազմվել է նաև ջրամբարի կառուցման վերաբնակեցման գործողությունների պլանը: Ջրամբարի ՆՆՓ-երի փաթեթը ներկայացվել է համալիր փորձաքննության: ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 175-Ն որոշման կարգի համաձայն՝ մշակվել են Քասախի ջրամբարի կառուցման հանրային ներդրումային ծրագրերի նախագիծը՝ որը ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշմանը: Ներկայումս ծրագրային փաթեթը լրամշակման փուլում է:		
		83.10.Արմավիրի մարզի Սելավ-Մաստարայի	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Սելավ-Մաստարայի ջրամբարի		

		ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.11.Տավուշի մարզում Հախում-2 ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Հախում-2 ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.12.Տավուշի մարզում Կողբի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Կողբի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.13.Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	ՀՀ Շիրակի մարզի Արթիկի ջրամբարի կառուցման ՆՆՓ-երի կազմման աշխատանքներն ավարտվել և ներկայացվել են Պատվիրատուին: Արթիկի ջրամբարի ՆՆՓ-երի պարզ փորձաքննության իրականացման համար արդեն մեկնարկել է մրցութային գործընթաց: Մշակվել է նաև ջրամբարի Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը, մշակման փուլում է գտնվում		

			Վերաբնակեցման գործողությունների պլանը: Պատվիրատուին է ներկայացվել նաև ՀՀ Շիրակի մարզի Արթիկի ջրամբարի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, որն ուղարկվել է շահագրգիռ կողմերին՝ կարծիքի:		
		83.14.Սյունիքի մարզում Խնձորեսկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Խնձորեսկի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:		
		83.15. Սյունիքի մարզում Լիճքի (Մեղրի) ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում **/2022-2026 թվականներ/**	Սյունիքի մարզի Լիճքի ջրամբարի ՆՆՓ-երի առանձին կառուցվածքների հաշվարկներում և նախագծման տեխնիկական լուծումներում կատարվել են փոփոխություններ, ներկայումս իրականացվում է ծախսերի գնահատման փուլը: ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի ջրամբարի ՇՄՍԱԳ փորձաքննության վերաբերյալ ներկայացվել է դրական եզրակացություն: Մշակվել է նաև ջրամբարի Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը և Վերաբնակեցման գործողությունների պլանը: Լիճքի ջրամբարի ՆՆՓ-երի պարզ փորձաքննության իրականացման		

			համար արդեն մեկնարկել է մրցութային գործընթաց:		
		83.16.Կապսի ջրամբարից մինչև Թալինի մայր ջրանցքի ոռոգման ջրատարի կառուցում **/2022-2026 թվականներ/**	Ջրային կոմիտեի կողմից ՀՀ 2025-2027թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտով, որպես նոր նախաձեռնություն, ներկայացվել է, Կապսի ինքնահոս ջրատարի նախագծում և կառուցում միջոցառումը, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից չի ընդունվել: Մեկնաբանվել է, որ 2025թ-ին աշխատանքների համար միջոցները չեն նախատեսվել՝ ՀՀ կառավարության 09.02.2023թ-ի N 175-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված Հանրային ներդրումային կոմիտեի որոշման, ծրագրի գնահատման և առաջնահերթությունների ցանկում ընդգրկված չլինելու պատճառով: Միջոցները նախատեսվել են սկսած 2026թ-ից, ակնկալելով, որ մինչ այդ կանցնեն հիշյալ որոշմամբ սահմանված ընթացակարգը:		
		83.17.Հերհերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցում **/2021- 2026թթ. (Շինարարության ավարտ 2027թ.)/**	Հեր-Հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման նպատակով դեռևս 2019 թվականին, ձեռք է բերել ՀՀ Վայոց ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերը, որի կառուցման ընդհանուր արժեքը կազմում է 10 714 678.1 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ծրագրի իրականացման նպատակահարմարության և		

			արդյունավետության վերաբերյալ տեղի են ունեցել քննարկումներ, այդ թվում նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում, տեղում՝ Հեր-հերի ջրամբարի տարածքում իրականացվել են ուսումնասիրություններ։ Մարզպետարանի կողմից ևս կարևորվել և առաջնային է համարվել Ծրագրի իրականացումը։ Սակայն համաձայն նախագծող կազմակերպության կարծիքի, և նախնական հաշվարկների, մեկ այլ նախագծային լուծմամբ ջրի ճնշումը նման ռելիեֆի պայմաններում թույլ կտա նման գործողություններ իրականացանելու, քանի որ նախագծման փուլում նման առաջադրանք չի տրվել և այդ հատվածներում լրացուցիչ հողատարածքներ ընդգրկելու դեպքում անհրաժեշտ է ինքնահոս համակարգի հետագծի որոշ փոփոխություն, այլ ուղեգիծ և նոր նախագծային լուծումներ։ Մասնագիտական քննարկման արդյունքում որոշվեց, որ. 1. Շահագրգիռ կողմերի քննարկումների արդյունքներով հավանության տալ Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցման ծրագրին և վերահաստատել դրա կառուցման կարևորությունը։ 2. Ծրագրի տնտեսական արդյունավետության և հիմնավորվածության տեսանկյունից անհրաժեշտ է քննարկել այդ տարածքների		

			ընդգրկմամբ ու նոր նախագծային լուծումներ պարունակող այլընտրանքային տեխնիկատնտեսական ուսումնասիրության հիման վրա Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս համակարգի այլընտրանքային նախագծի մշակման առաջադրանք ձևավորելու հնարավորության հարցը։ ՀՀ վարչապետի մոտ 2023 թվականի ապրիլի 10-ին կայացած խորհրդակցության N Վ/77-2023 արձանագրության 3.4) 4.1 կետի՝ Հեր-Հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման ծրագիրը ներառվել է Ջրային կոմիտեի 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ (ներառյալ ՀՀ 2025թ. պետական բյուջեի) նոր նախաձեռնությունների մասով հայտում։ Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 24.01.2024թ. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» N 71-Ա որոշման 22-րդ կետի դրույթը՝ ՀՀ 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի միջոցառումների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է առաջարկ, համաձայն որի անհրաժեշտ է, որպեսզի ծրագիրը ՀՀ կառավարության 09.02.2023թ-ի N 175-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն հաստատվի		

			Հանրային ներդրումային կոմիտեի նիստում։ Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Հանրային ներդրումային ծրագրերի վերահանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» № 175-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել «Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցում» ծրագիրը։ Ծրագիրը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ և վերադարձվել է լրամշակման։ Լրամշակված տարբերակը կներկայացվի առաջիկայում՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանից կարծիքները ստանալուց և ամփոփելուց հետո։		
		83.19. Օրվա կարգավորիչ 31 հատ ջրավազանների կառուցում, վերակառուցում և նախապատրաստական աշխատանքների իրականացում **/2022-2025 թվականներ/**	Ջրային կոմիտեի հետ կնքված համապատասխան պայմանագրերի շրջանակներում Խորհրդատու կազմակերպության կողմից ներկայացվել են օրվա կարգավորման թվով 28 ջրավազանների նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական փաթեթները։ 2024 թվականի ընթացքում կազմակերպվել են թվով 28 օրվա կարգավորման ջրավազանների կառուցման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ		

			փորձաքննության կազմակերպման գործընթացը, որի դրական եզրակացությունների արդյունքներով մեկնարկվել է համալիր փորձաքննության կազմակերպման գործընթացը։ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համաձայն՝ կառուցապատման նպատակով քաղաքաշինական գործունեությունն իրականացվում է ՀՀ օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ կառուցապատողին սեփականության կամ այլ (կառուցապատման իրավասություն տվող) իրավունքով պատկանող հողամասում: Համալիր փորձաքննության դրական եզրակացություն ստանալու նպատակով թվով 14 սեփականության վկայականներ ունեցող ՕԿՋ-երի ՆՆՓ-երն ուղարկվել է Քաղաքաշինության կոմիտե։ Համալիր փորձաքննության դրական եզրակացության պարագայում 2025 թվականի առաջին կիսամյակում կմեկնարկեն Օրվա կարգավորման ջրավազանների շինարարական կազմակերպության ընտրության մրցութային գործընթացը։		

		83.20. Արագածոտնի մարզում Գառնահովիտի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում **/2024-2026 թվականներ/**	Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարվել է Գառնահովիտի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայության ձեռքբերման մրցույթ:		
		83.21. Տավուշի մարզում Կարմիր գյուղի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում **/2024-2026 թվականներ/**	Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարվել է Կարմիր գյուղի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայության ձեռքբերման մրցույթ:		
		83.22. Լոռու մարզում Գետիկի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում **/2024-2026 թվականներ/**	Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարվել է Գետիկի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայության ձեռքբերման մրցույթ:		
84	«Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականությա ն ապահովում	84.1.Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի վթարային հատվածների ուսումնասիրություն, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարական աշխատանքների իրականացում	01.09.2024 թվականից իրականացվում են «Արփա-Սևան» թունելի վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքները: Նախագծով նախատեսված շուրջ 244.7 մ երկարությամբ առավել վթարային հատվածների 45% վերանորոգվել են 2024թ., մնացած մասը նախատեսվում է ավարտել մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը:		

		/2024-2026 թվականներ (շարունակական)/	Հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ նախատեսվում է գնահատել նաև առավել վթարային հատվածները և պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ՝ հիմնանորոգման աշխատանքները 2025 թվականի սեպտեմբերից մեկնարկելու նպատակով:		
85	Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում	85.1.Կոլեկտորադրենաժայի ն ցանցի պահպանում և շահագործում: Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում **/2021 թվական (շարունակ ական)/**	ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի «Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում իրականացվել են կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման շուրջ 173.0 կմ երկարությամբ աշխատանքներ, իսկ խնայված միջոցների հաշվին՝ ևս 45.6 կմ: Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում իրականացվել են գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:		
86	Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում	86.1.Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների	Հակահեղեղային առաջնահերթ միջոցառումներից ավարտվել և շահագործման է հանձնվել ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2000 մ հատվածում» աշխատանքը: «Գետիկ գետի հունի մաքրում շուրջ 1600մ և ափերի ամրացում շուրջ 150 մ Ճամբարակ խոշորացված համանքի Մարտունի գյուղի տարածքում» աշխատանքները կասեցվել են հաշվի առնելով 2022 թվականի		

		իրականացման կանոնակարգման, կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում **/2024-2026 թվականներ (շարունակական)/**	դեկտեմբերի 16-ի «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-431-Ն օրենքի դրույթները: «Նարեկի սելավատարի հունի մաքրում 2945 մ և ափերի ամրացում 380 մ» աշխատանքները 12.12.2024թ. դրությամբ ավարտվել են։ ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի /Դեբեդավան, Բագրատաշեն, Պտղավան, Հաղթանակ բնակավայրերի/ տարածքում Դեբեդ գետի ափի ամրացման և սահմանային ճանապարհի /հայ-վրացական սահման/ ստեղծման աշխատանքների իրականացման նպատակով աշխատանքներ էր տարվում նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը վրացական կողմի հետ համաձայնեցնելու համար, սակայն սույն թվականի մայիսի 25-26-ին Դեբեդ գետի վարարումների պատճառով տեղի ունեցած աղետալի իրադարձությունների հետևանքով, հիշյալ նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված ափերի ամրացման, սահմանային ճանապարհի վերականգնման և ստեղծման գրեթե բոլոր հատվածներում տեղի են ունեցել փլուզումներ, որի պատճառով ամբողջությամբ փոխվել են նախագծային ելակետային տվյալները, նախագծով		

			առաջարկվող խնդիրների լուծման տարբերակները, բնականաբար՝ նաև նախատեսված շինարարական աշխատանքների ծավալները: Ստեղծված իրավիճակում հիշյալ հատվածներում ափերի ամրացման և սահմանային ճանապարհների վերականգնման, ստեղծման շինարարական աշխատանքների իրականացումը գոյություն ունեցող նախագծանախահաշվային փաստաթղթերով հնարավոր չէ: ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի Դեբեդավան, Բագրատաշեն, Պտղավան, Հաղթանակ բնակավայրերի տարածքում Դեբեդ գետի ափերի ամրացման և Հայաստան-Վրաստան սահմանային ճանապարհի վերականգնման աշխատանքների ուսումնասիրությունների և անհրաժեշտ ֆինանսական միջոցների մոտավոր չափի հաշվարկներն իրականացնելու նպատակով ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահի 2024 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 113-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ: ՀՀ Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N 16-ից մինչև N 14 սահմանների միջակայքում Արաքս գետի նախկին հունի վերականգնման և N 16 սահմանանշանի մոտակայքում Արաքս գետի հայկական կողմի մոտ 130 մետր երկարությամբ և 8 մետր խորությամբ ողողված պատնեշի		

			վերականգնման աշխատանքների նախագծային փաթեթները Թուրքական կողմի հետ համաձայնեցման փուլում է: Ընթանում է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ և Առափի բնակավայրերի տարածքում Ախուրյան գետի 3.9 կմ ընդհանուր երկարությամբ հատվածներում հունի մաքրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գնումների գործընթացը: Ընթանում են Նոր Կյանք և Վարդաքար համայնքների բետոնապատ հեղեղատարի մաքրման և կարգավորման, Նոր Կյանք համայնքի հեղեղատարի վերին տեղամասի, ՀՀ Արմավիրի մարզում Մեծամոր գետի 250 մ երկարությամբ ափապատնեշի բարձրացման և Մեծամոր գետի 620 մ ընդհանուր երկարությամբ հատվածներում հունի մաքրման և ՀՀ Արագածոտնի մարզում Ռիա-Թազա համայնքի երկու հեղեղատարների մաքրման և կարգավորման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գնումների գործընթացը:		
87	Ոռոգման համակարգերում գույքի առկայության և վիճակի գնահատում	87.1. Իրականացնել ոռոգման համակարգերի (ջրանցքներ, ջրամբարներ, խորքային հորեր, ջրատար խողովակներ, պոմպակայաններ, շենքեր, շինություններ,	«Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրով նախատեսվել էր իրականացնել ՀՏԿ-ների քարտեզագրում և չափագրում, դրանց փաստացի վիճակի մասին թարմացված քանակական և որակական		

		մեքենամեխանիզմներ, հիդրոտեխնիկական այլ կառուցվածքներ և այլն) գույքագրում և գնահատում **/2021-2026 թվականներ/**	տվյալների մուտքագրում ԱՏՀ ծրագրային հավելված: Սակայն ծրագրի դոնոր Կայունության և Զարգացման Եվրասիական հիմնադրամի վերջին առաքելության այցի ընթացքում որոշվել է այդ միջոցառման գումարները ուղղել կապիտալ շինարարական աշխատանքներին, իսկ չափագրման աշխատանքների առավել մեծ ծավալներով իրականացման հնարավորությունները քննարկել և դիտարկել առաջիկա հնարավոր նոր ծրագրերի շրջանակներում: ՀՀ կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2020 թվականի ապրիլի 23-ի N CAM 1002 06 D ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում (2025-2026թթ.) «Հայաստան-Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակներում Արարատի և Արմավիրի մարզերում կիրականացվի մայր և երկրորդ կարգի ջրանցքների փաստացի վիճակի տեխնիկական գնահատում, որի արդյունքում կունենանք ակնկալվող ցուցանիշները Արարատի և Արմավիրի մարզերում, իսկ հանրապետության մյուս տարածքներում ոռոգման համակարգերի գույքագրումը պլանավորված է Համաշխարհային բանկի «Ջրային		

			և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր»/WISE ծրագրում, որը ներկայումս գտնվում է վերջնական քննարկման փուլում:		
88	Գործող ջրամբարների պատշաճ շահագործում	88.1.Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ **/2024-2026 թվականներ (շարունակական)/**	2024թ. ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի, պատվարի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով 3 անգամ իրականացված գնման ընթացակարգերը չեն կայացել, 2-ը մասնակից չլինելու պատճառով, 3-րդը՝ հայտերից և ոչ մեկը չի համապատասխանել հրավերի պահանջներին: Թվով 3 ջրամբարների (Սառնաղբյուր, Այգեձոր, Սևաբերդ) վերականգնման համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքվել են պայմանագրեր՝ Խորհրդատվական ծառայությունների (նախագծանա-խահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ) ձեռքբերման նպատակով:		
		88.2.Յուրաքանչյուր ջրամբարի տեխնիկական անվտանգության ապահովման ծրագրի մշակում **/2021-2026 թվականներ/**	Ջրամբարների և հիդրոտեխնիկական այլ կառուցվածքների անվտանգության հայտարարագրերի կազմման համար անհրաժեշտ է տեխնիկական հանձնաժողովի եզրակացությունը: Ներկայիս տեխնիկական հանձնաժողովի կազմն անհրաժեշտ է փոխել/թարմացնել: Ջրային կոմիտեն նախաձեռնել է Ջրային համակարգերի օգտագործման և		

			պահպանության տեխնիկական հանձնաժողովի կազմի փոփոխություն, որի վերջնական կազմը կհաստատվի 2025 թվականի սկզբում: Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի կողմից կիրականացվի ՀՏԿ-ների զննում՝ տեխնիկական վիճակի գնահատման նպատակով: Կմշակվեն առաջադրանքի պայմանները, որից հետո կմեկնարկի օգտագործման մեջ գտնվող ՀՏԿ-ների անվտանգության հայտարարագրերի կազման մրցութային գործընթաց:		
96.	Բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծում, այդ նպատակով պետական սեփականություն համարվող հանրակացարանային տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացի ավարտում	96.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ **/Մինչև 2024 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ: Կատարվել է սահմանված ժամկետում/**	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից մշակվել և 2024 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության ու պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի		
		96.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման մեջ			

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ **/Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ: Կատարվել է սահմանված ժամկետում/**	կառավարման կոմիտեին նվեր ընդունելու լիազորություններ վերապահելու մասին» N 2037-Ն որոշումը:		
		96.3 «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու ու 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 1067- Ն որոշումն ուժն կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում **/Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ: Կատարվել է սահմանված ժամկետում/**			
97.	Պետական գույքի արդյունավետության բարձրացում, պետական գույքի էլեկտրոնային հաշվառման միասնական բազայի տվյալների հիման վրա պետական գույքի օգտագործման վիճակի	97.1 Պետական անշարժ գույքի օգտագործման մշտադիտարկման շնորհիվ գույքի օգտագործման ժամանակահատվածում պատշաճ հսկողության սահմանում, վնասների բացահայտում և դրանք վերականգնելու ուղղությամբ	Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի 202-Ն որոշման պահանջները՝ պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակը բացահայտելու և բարելավելու նպատակով Կոմիտեին հանձնված պետական գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ,		

	մշտադիտարկման, վերլուծության, ինչպես նաև արդյունավետության մակարդակի գնահատման շնորհիվ պետական գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից շեղումների, խախտումների և դրանց պատճառած վնասի բացահայտում	միջոցների ձեռնարկում, ինչպես նաև առաջին անգամ մշտադիտարկման շնորհիվ անշարժ գույքի օգտագործման արդյունավետության գնահատում: Իրավական ակտերի պահանջներից և կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններից թույլ տված շեղումների, խախտումների բացահայտում, չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքի առանձնացում, արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների և գույքի օգտագործման բարելավման վերաբերյալ, Կոմիտեի գործող ստորաբաժանումների օպտիմալացման արդյունքում և հաստիքների օգտագործման շնորհիվ նոր մշտադիտարկման վարչության ստեղծելու մասին առաջարկությունների ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ **/2022 թվականից մինչև 2023 թվականի դեկտեմբեր ի 3-րդ տասնօրյակ/**	աշխատանքային խումբը մոնիթորինգն իրականացրել է պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի): Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում մշտադիտարկման է ենթարկվել թվով 502 անշարժ գույք: Մոնիթորինգն իրականացվել է գույքը օգտագործողի կողմից անհատույց օգտագործման, վարձակալության և պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրերով: Գույքի մոնիթորինգի ընթացքում բացահայտվել են վերոնշյալ բնագավառները կանոնակարգող իրավական ակտերով սահմանված պետական սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման տրամադրված պայմանագրի կողմ հանդիսացող պետական մարմնի և օգտագործող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերին համապատասխան անշարժ գույքի օգտագործման վիճակը, այդ թվում՝ համապատասխանությունը, շեղումները և շեղումների արդյունքում տեղ գտած խախտումները:		

98.	Պետական համակարգի մարմինների և պետական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին օգտագործվող ոչ պետական սեփականություն համարվող տարածքները պետական սեփականություն համարվող տարածքներով փոխարինումը	98.1 «Պետական կարիքների համար վարձակալած ոչ պետական տարածքները պետական տարածքներով փոխարինելու մասին» Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ **/Մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ: Կրում է շարունակական բնույթ/**	Կոմիտեն մշակել և ՀՀ կառավարության կողմից 2022 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է «Պետական կառավարման համակարգի մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործառույթների իրականացման համար պետական սեփականություն հանդիսացող տարածքով ապահովելու կամ դրա բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքները վարձակալությամբ ձեռքբերման կարգը հաստատելու մասին» N 2057-Ն որոշումը: Գործընթացը կրում է շարունակական բնույթ: Պետական կարիքների համար վարձակալած ոչ պետական տարածքները պետական տարածքներով փոխարինելու նպատակով 2024 թվականին շրջանառության մեջ իրավական ակտերի նախագծեր չեն նախապատրաստվել:		
100.	Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ և օտարման ոչ ենթակա պետական գույքի կազմի և կառուցվածքի սահմանում	99.1 Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույքի կազմը սահմանելու նպատակով Կոմիտեի նախաձեռնությամբ պետական մարմինների մասնակցությամբ ու	Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույքի կազմը սահմանելու նպատակով՝ Կոմիտեն պետական մարմիններից՝ նախարարություններից, Կառավարության ենթակա մարմիններից ստացված տեղեկատվությունն ամփոփել է:		

		առաջարկությունների, ինչպես նաև իրականացվող մշտադիտարկման արդյունքների հիման վրա պետական մարմինների գործառույթների իրականացման համար անհրաժեշտ անշարժ գույքի նկատմամբ պահանջների սահմանում և օտարման ոչ ենթակա գույքի կազմի և մակերեսի առանձնացում: Նշված տեղեկատվության հիման վրա համապատասխան փոփոխությունների կատարում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թվականի ապրիլի 1-ի N 458-L որոշմամբ հաստատված պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրում **/Մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ: Կատարվել է սահմանված ժամկետում/**	Արդյունքում ՀՀ կառավարության 01.04.2021 N 458-L որոշմամբ հաստատված պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրում ՀՀ կառավարության 22.06.2023թ. N 1036-L որոշմամբ կատարվել են լրացումներ և փոփոխություն, որի հիմքով մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի ցանկն ավելացվել է թվով 136 գույքով: Նշված տեղեկատվությունը հիմք է ծառայել նաև պետական գույքի կառավարման 2024-2026 թվականների ծրագրի մշակման համար, որը 2024 թվականի փետրվարի 8-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է N 199-Լ որոշմամբ:		
100	Բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ներգրավման, չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող՝ համեմատաբար	100.1 Բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու և պետական գույքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 1 մլրդ ՀՀ դրամ և ավել գնահատված արժեքով և ներդրումային հետաքրքրություն ունեցող	Տվյալ կետով նախատեսված հանձնառության ապահովման համար իրականացվել է 101.1. միջոցառումը, որի նպատակն է օտարման ճանապարհով գույքի ներգրավմամբ իրականացնել խոշոր ներդրումային ծրագրեր, ինչի արդյունքում կբարձրանա անշարժ գույքի հանրային օգտակարությունը		

	բարձր իրացվելիություն ունեցող պետական անշարժ գույքի առանձնացում և վաճառքի կազմակերպման միջոցով սոցիալ-տնտեսական նշանակության ներդրումային խոշոր ծրագրերի իրականացում	առնվազն տասը միավոր անշարժ գույքի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի հավաքագրում և օտարման գործընթացի կազմակերպում: **/2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ/**	և կապահովվեն ՀՀ պետական և համայնքային բյուջեների համար լրացուցիչ մուտքեր: Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում բացվել են լրացուցիչ աշխատատեղեր և հանրային ծառայությունների մատուցման համար ստեղծվել են լայն հնարավորություններ, մասնավորապես 2024 թվականին կնքված 15 օտարման պայմանագրերից 6 օտարման պայմանագրերով գնորդները ստանձնել են 32 351 000 000 ՀՀ դրամի ներդրում:		
101	Պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետության բարձրացում, այդ նպատակով նոր գործիքակազմի ստեղծում՝ մասնագիտացված կառույցներին պատվիրակելու միջոցով	101.1 Մինչև 3 միավոր պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետ կազմակերպելու նպատակով (պիլոտային ծրագրի շրջանակներում) այդ աշխատանքներին մրցակցային եղանակով մասնագիտացված կազմակերպությունների ներգրավում և դրանց մասնակցության կանոնակարգում՝ նոր գործիքակազմի ստեղծման շնորհիվ: **/Մինչև 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ: Կատարվել է սահմանված ժամկետում:/**	Մինչև 3 միավոր պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետ կազմակերպելու նպատակով այդ աշխատանքներին մրցակցային եղանակով մասնագիտացված կազմակերպությունների ներգրավելու համար բրոկերային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Կոմիտեում 16.03.2023թ-ին տեղի է ունեցել աշխատանքային քննարկում: Աշխատանքային քննարկման ընթացքում կազմակերպությունների ներկայացուցիչները հայտնել են, որ իրենց միջոցով հնարավոր կլինի յուրաքանչյուր գույք օտարել միայն բացառիկ օտարման իրավասություն ունենալու և յուրաքանչյուր օտարման գործարքից 2-3% միջնորդավճար ստանալու դեպքում, ինչպես նաև		

			օտարման գործընթացը պատշաճ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ստանալ տեղեկատվություն օտարման ենթակա գույքի քաղաքաշինական և այլ սահմանափակումների վերաբերյալ: Սակայն հարկ ենք համարում նշել, որ բարձր իրացվելիություն ունեցող գույքերը արդեն իսկ օտարվում են մրցութային կամ աճուրդային եղանակով, մինչդեռ բրոկերային կազմակերպություններին ևս հետաքրքրում են բարձր իրացվելիություն ունեցող գույքը: Կարելի է արձանագրել, որ բրոկերային կազմակերպությունների միջոցով պետական գույքի օտարման գործընթացը մի շարք ռիսկեր է պարունակում, մասնավորապես՝ օտարման գործընթացի ոչ մրցակցային լինելը: Առկա է նաև օտարման երկրորդ մոդելը՝ մասնագիտացված կազմակերպություններից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումը, որի ընթացքում նրանք կապահովեն գործընթացի հրապարակայնությունը և պոտենցիալ գնորդներին խորհրդատվության մատուցումը: Այս մոդելի ընթացքում հնարավորություն կընձեռվի արդեն իսկ վաճառքի դրված գույքի համար գնորդներ ներգրավել նաև մասնագիտացված կառույցների միջոցով, որոնք գույքը վաճառվելու		

			դեպքում վերջիններս ևս հնարավորություն կունենան 1% միջնորդավճար ստանալու օտարված գույքի մեկնարկային գնի արժեքից և 2% միջնորդավճար մեկնարկային գնի և վաճառքի գնի տարբերությունից: Վերոնշյալ մոդելների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Միաժամանակ խնդրել ենք Փոխվարչապետի դիրքորոշումը ներկայացված մեթոդներից նախընտրելի տարբերակի վերաբերյալ: Միաժամանակ Կոմիտեն պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վաճառքի և/կամ վարձակալության գրավչության բարձրացման, վաճառքների խթանման, ներդրողների համար պետական գույքի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանն ուղղված միջոցառումների ձեռք բերման նպատակով իրականացրել է մարքեթինգի կառավարման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՊԳԿԿ-ԵՄԽԾՁԲ-2024/1-1 ծածկագրով երկփուլ մրցույթ, որի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Դիգնիսի» ՍՊԸ-ն: Վերոնշյալ ծառայությունների իրականացման համար Կոմիտեն ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի ակնկալում: Իրականացվելիք միջոցառումների շրջանակում վճարումը նախատեսվում է իրականացնել		

			Գույքի գնորդի կողմից, որը չի ներառվի Գույքի վաճառքի գնի մեջ և մատուցվող ծառայությունների վարձատրության չափը կսահմանվի՝ ելնելով ներդրումային փաթեթներից: 2024 թվականի դեկտեմբերի 4-ին Կոմիտեն գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ստանալու համար դիրքորոշում առ այն, թե արդյոք տվյալ պարագայում նպատակահարմար է կնքել գնման պայմանագիր, որին ի պատասխան հայտնել են, որ նպատակահարմար չէ:		
102	Նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորում և արժեթղթերի շուկայի կայացում, ինչպես նաև ֆոնդային բորսայի միջոցով համեմատաբար բարձր շահութաբերություն ունեցող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ ի մասնավորեցման գործընթացի իրականացում	102.1 «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում **/մինչև 2024 թվականի նոյեմբերի 23-ը: Կատարվել է սահմանված ժամկետում/**	Տվյալ միջոցառման կատարման շրջանակներում մշակվել և 2024 թվականի մարտի 20-ին ընդունվել է ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-135-Ն օրենքը, որով «Արտակարգ իրավիճակների օդանավակայան» ՓԲԸ-ն հանվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի մաս կազմող՝ «2017-2020 թվականներին մասնավորեցման առաջարկվող պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների, մասնավորեցման օբյեկտների (այդ թվում՝ մասնավորեցման նախորդ ծրագրերում ընդգրկված)» ցանկից: Միաժամանակ, տվյալ միջոցառման կատարման շրջանակներում ՀՀ ՏԿԵՆ 21.11.2024թ. թիվ ԴԽ///37511-	Մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ /ՀՀ կառավարության 30.05.2024թ. N 816-Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել, որով «Ռիփաբլիք Պլազա» ՓԲԸ-ի մասնավորեցման ծրագրում ընդգրկելու առաջարկի մասին ժամկետը սահմանվել է մինչև 2024 թվականի նոյեմբերի 23-ը: Կատարվել է սահմանված ժամկետում:	

			2024 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 17-ի թիվ 1404-Ա որոշմամբ ստեղծված «Ռիփաբլիք Պլազա» փակ բաժնետիրական ընկերությունն ընդգրկել մասնավորեցման ցանկում: Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 03.12. 2024թ. նիստի թիվ ԿԱ/362-2024 արձանագրության 8-րդ կետով «Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ-ն «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի ցանկում ընդգրկելու օրենքի նախագծին տրվել է բացասական դիրքորոշում՝ առաջարկելով Կոմիտեին երկշաբաթյա ժամկետում Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի քննարկմանը ներկայացնել ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 17-ի «Գույք հետ վեցնելու, ամրացնելու, գույքի ներդրմամբ «Ռիփաբլիք Պլազա» բաց բաժնետիրական ընկերություն հիմնադրելու մասին» N 1404-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծ, որով կնախատեսվի, որ գույքը		

			մասնավորեցման ցանկում կներառվի 6-ամսյա ժամկետում: Մշակվել և 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 17-ի N1404-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2059-Ա որոշումը:		
103	Մասնավորեցման ոչ ենթակա պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կազմի և կառուցվածքի օպտիմալացում, ըստ ճյուղերի թվաքանակի սահմանում, ինչպես նաև վնասով, ոչ արդյունավետ և զարգացման հեռանկար չունեցող կազմակերպությունների առանձնացում և մասնավորեցման ծրագրում ընդգրկում	103.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ **/Մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ: Կատարվել է սահմանված ժամկետում/**	Միջոցառման կատարումն ապահովելու նպատակով Կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունիսի 22-ին ընդունվել է թիվ 983-Ն որոշումը: Միաժամանակ ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1262-Ն որոշման համաձայն՝ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից 2023թ. տարեկան տվյալների հիման վրա իրականացված ֆինանսատնտեսական մոնիտորինգի ընթացքում վնաս ձևավորած, 2023թ. շահույթ ձևավորած, սակայն 2022թ. ինչպես նաև շահույթ/վնաս չձևավորած առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի վատթարացման վերաբերյալ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված պարզաբանումների հիման վրա Կոմիտեի կողմից մշակվել են կազմակերպությունների գործունեության բարելավմանն		

			ուղղված առաջարկություններ, այդ թվում մասնավորեցման ներկայացնելու վերաբերյալ:		
104	Պետական գույքի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բարելավման կարիք ունեցող և հետագայում օտարման ոչ ենթակա, որպես պետական սեփականություն պահպանվող գույքի առանձնացում, և որոշակի ներդրումային ծրագրերի իրականացման դիմաց երկարատև վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման միջոցով տվյալ գույքի հիմնանորոգման և վերակառուցման ապահովում	104.1 Բարելավման կարիք ունեցող մինչև տասը միավոր պետական անշարժ գույքի՝ ներդրումների իրականացման դիմաց երկարատև վարձակալության կամ որոշակի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրում **/2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ: Կրում է շարունակական բնույթ/**	2024 թվականին վարձակալությամբ է տրամադրվել Աբովյան 3 հասցեում գտնվող գույքը, վարձավճարի չափը կազմում է 16 200 000 ՀՀ դրամ: Բարելավման կարիք ունեցող մինչև տասը միավոր պետական անշարժ գույքի՝ ներդրումների իրականացման դիմաց երկարատև վարձակալության տրամադրման նպատակով Կոմիտեի կողմից մշակված և ընդունված 5 իրավական ակտերի համաձայն՝ օգտագործողների կողմից նախատեսվում է կատարել ընդհանուր առմամբ 1 302 185 610 ՀՀ դրամի ներդրում:		
105	Մարզերում պետություն-համայնքներ գործընկերության բնագավառում ՓՄՁ-ի զարգացում չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող, ինչպես նաև նախկինում	105.1 Մարզերում գտնվող չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի ներգրավմամբ տեղական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացում, այդ նպատակով մինչև տասը	ՀՀ մարզերում գտնվող չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի ներգրավմամբ տեղական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով 6 անշարժ գույքի օտարման վերաբերյալ ընդունվել են ՀՀ կառավարության որոշումներ:		

	օտարման ներկայացված, սակայն չվաճառված գույքի առանձնացում, և այդ գույքի ներդրմամբ տարբեր ձևաչափերով տնտեսական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացում:	միավոր ոչ բարձր իրացվելիություն ունեցող անշարժ գույքի օտարում, վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրում ՀՀ ՏԿԵ նախարարության և համայնքների օժանդակությամբ **/Մինչև 2024 թվականի փետրվարի 1-ին տասնօրյակ: Կրում է շարունակական բնույթ/**	Շրջանառության մեջ են գտնվում 4 անշարժ գույքի օտարման և 1 անհատույց օգտագործման տրամադրման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծեր:		
106	ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումների իրականացում	106.1 ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումներից բխող քայլերի իրականացում ուղղված համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը	ՀՀ վարչապետի 2021 թվականի հունիսի 4-ից 17-ը մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրների կարգավորմանն ուղղված՝ 2022թ. համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ մասնավորապես ճանապարհաշինություն /ճանապարհների հիմնանորոգում, վերանորոգում/, լուսավորության ցանցի ընդլայնում, ոռոգման համակարգերի արդիականացում, ինչպես նաև մանկապարտեզների և դպրոցների հիմնանորոգման/վերակառուցման աշխատանքներ		
107	Ռեսուրսների ռացիոնալ և համաչափ	107.1 «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման	10.10.2022 թվականի թիվ ԳՍ/26.2/27073-2022 գրությամբ ներկայացվել է Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի աշխատակազմ:		

	արդյունահանման ապահովում	առանձնահատկություններ ի մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման ընդունում **/2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/**			
		107.3 «Գետառողողատային տիպի հանքավայրերում ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունում **/2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ/**	Նախագծերը կմշակվեն «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը՝ (սահմանային շերտում և սահմանային գետերի գետառողողատային տիպի հանքավայրերից ավազի արդյունահանման հարաբերություններ) ԱԺ-ի կողմից ընդունվելուց հետո:		
		107.4 «ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1129-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում **/2024 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ/**			